

փողոցում և նայում էինք խանութներին. յանկարծ մի գողնու-
ցաւոր մարդ շատ խոնարհաբար առաջ եկաւ և մեզ հրաւիրեց
իր խանութը: Նա կաշուէ անդրավարտիկ կարող էր: Նա շատ
թախանձեց որ մենք թոյլ տայինք իրան մեր չափսը վերցնել
և իւրաքաչիւրիս համար մի զոյգ պատրաստել: Մենք նրան
ասացինք թէ մեր երկրում սովորութիւն չկայ կաշուէ անդրա-
վարտիկ հագնելու, ասացինք որ իրանում այդպիսի բան չգի-
տեն ինչ է, բայց իզո՛ւր, նրա այնքան թախանձեց որ մենք
ստիպուեցինք թոյլ տալ իրան մեր չափսը վերցնել:

Մենք յետոյ լսեցինք որ նա նպատակն այն էր որ մեզ
համար կաշուէ անդրավարտիկներ պատրաստելով՝ իրաւունք
ունենար իր խանութի ճակատին գրել «Մոհամէդ Մարգարէի
համար կաշուէ անդրավարտիկ կարող»:

Միւրգա ֆիրուզը շատ հալածանքներ կրեց, մանաւանդ
թատրոններից: Մեծ բազմութիւն գրաւելու նպատակով, թատ-
րոնների կառավարիչները շարունակ հրաւիրում էին նրան ներ-
կայանալ իրանց ներկայացումներին, և նախօրօք խոշոր տա-
ռերով տպուած յայտարարութիւններ էին ցրւում ամբողջ քա-
ղաքում՝ ղեկուցանելով բնակիչներին, որ իբր թէ պարսից դե-
սպանն այս ինչ գիշեր այս ինչ թատրոնում ներկայ է լինելու:
Նրանք միևնոյն ժամանակ մի խոշոր սուտ էլ էին հրատարա-
կում, յայտնելով որ իբր թէ ներկայացուելիք պիէսը դեսպանն
է նշանակել և հրամայել որ խաղացուի: Տեսէք ինչ սուտ.
ինչպէս էր կարող նա այդպէս բան անել քանի որ նա հազիւ
թէ անգլիերէն այբբէնարանի միայն մի քանի էջերն էր դեռ
անցել:

Ինչ և է, երբ նրան շատ էին նեղացնում՝ թախանձելով
որ ներկայանար թատրոնում, նա ինձ էր ուղարկում որպէս
ներկայացուցչին և մեր անգլիացի ծառաներից մէկին կամ մեհ-
մանդարին նշանակում:

«Horse opera» կոչուած մի օպերայում էր, ուր մինչդեռ ես
իմ իշխանաւորի կերպարանքն ու ձևերը վրաս առնելու համար
վեր էի ոլորում բեխերս ու շատ բարձրից էի նայում հանդիս-
ականներին՝ ծանօթացայ անգլիական մի մեծ ընտանիքի հետ,
որը բաղկացած էր մի՛ զարմացնելու չափ պարարտ, հաստիկ
հօրից, մի շատ նիհար մօրից, մի որդուց և երեք դստերից:
Սրանք տեղաւորուած էին մի օթեակում իմիս մօտ և իմ թևս
երբեմն դիպչում էր աղջիկներից ամենափոքրին:

Այս բանը պատճառ դարձաւ նրանց՝ ինձ նայելու, սիրոյ
հայեացք ձգելու վրաս, և հետո ծանօթանալու ցանկութեան
նշան ցոյց տալու:

ի վերջոյ, մայրը թեքուելով դէպի իր աղջիկը՝ ասաց նրան:

—Մի նարինջ առաջարկիր նորին վսեմափայլութեանը:

Իր մօր այս խօսքի վրայ, աղջիկը շիկնեց—Օ, ի՜նչ հրաշալի էին նրա կարմիր թշերը—և դանդաղելով նարինջը մատուցեց ինձ:

Այդպիսի մի յարգանք որ բոլորովին պարսկական էր, և արտայայտիչ էր բարեկամութեան և բարեացակամութեան՝ իսկոյն իմ կողմից ընդունուեց մեծ շնորհակալութեամբ. և ես գործածեցի ճիշտ այնպիսի մի արտայայտութիւն՝ որպիսին ես գործ կ'ածէի Պարսկաստանում նոյնաման դէպքում:

Յետոյ նրա հայրը կանգնեց շատ մեծ ձեւականութեամբ: Նա մի կատարեալ ըաջըաջ¹⁾ էր: Նա մի մարդ էր, որը պարզ երևում էր համոզուած թէ դրախտը իր մարմնի մէջ է... և թէ փորը փստուղով ու նշով լցրած և տապակած գառը՝ այս աշխարհում միակ գնահատելի հարստութիւնն է կազմում:

Նա շնորհակալութիւն յայտնեց ինձ իմ ցոյց տուած քաղաքավարութեան համար, և ասաց որ ինքը լիայոյս է, որ ապագայում անգլիացիք և պարսիկները իրար հետ կը կապուեն բարեկամական ամենապինդ կապերով:

Ինտպանական վեհանձնութեամբ՝ ես ասացի.

—Դուք անշուշտ խելքի տէր բարդ էք. դուք գիտուն էք, դուք ճանաչում էք աշխարհը, դուք հայրենասէր էք:

Ես նրան խոստացայ աշխատել Շահին իմաց անելու թէ՛ ի՜նչ հաւատարիմ ծառայ²⁾ էի գտել իրան համար:

Իմ այս խօսքը, ինչպէս պարզ երևաց, փոքր ինչ անհաճոյ թուաց նրան. բայց յետոյ նա սկսեց մի քանի հարցեր տալ ինձ: Օրինակի համար, նա հարցրեց թէ արդեօք Պարսկաստանում մենք թատրոններ ունենք, թէ արդեօք մենք ունենք այնպիսի ձիեր որ այստեղ՝ Անգլիայում կան, թէ արդեօք ես ֆրանսերէն գիտեմ, և թէ արդեօք ես ամուսնացած եմ և զաւակներ ունիմ:

Երբ ես պատասխանեցի թէ «ամուսնացած չեմ», իսկոյն նկատեցի որ նրա աղջիկները այլալուեցին և իւրաքանչիւրը մի քիչ շարժուեց, իբր թէ զգեստի այս ինչ մասը շտկելու համար:

Մայր խանուհն անդադար աշխատում էր մի կամ միւս

¹⁾ Մի մարդ որի միտը գերութիւնից լրմբում է:

²⁾ Պարսից Շահը ամեն մարդու իր ծառան է համարում: Մ. Թ.

ժողանակով ինձ մեծարել. և նախ քան ներկայացման վերջանալը՝ ես արդէն լաւ ծանօթացել էի այդ ընտանիքի հետ:

Ես տեսայ որ նա՝ մայր խանութը մի կատարեալ թափ-թափ¹⁾ էր: Նա ինձ հաւաստիացրեց թէ՛ իր ամենամեծ աղջիկը շատ լաւ աղջիկ է. որ իբր թէ նա միշտ աշխատում էր հրէաներին քրիստոնեայ դարձնել, որ նա շատ սիրում է աղքատներին՝ որոնց համար միշտ գուլպաներ և զգեստներ էր պատրաստում: Նա ասաց որ իր երկրորդ աղջիկը իր ընտանիքի ամենագեղեցիկն և ամենակատարեալն էր. որ նա գիտէր լաւ պարել, լաւ երգել, ծաղիկներ նկարել և իտալերէն խօսել. իսկ ամենափոքրը՝ թէև շատ բան էր խոստանում, բայց դեռ շատ փոքր էր ուշադրութիւն գրաւելու համար: Ինչպէս տաճիկներն են ասում, նա ամենափոքր աղջիկը, դեռ նոր կոտորել էր կեղևը և դեռ ձուից դուրս չէր եկել: Նա ակնարկեց որ իր աղջիկները ժամանակով շատ կը հարստանային, որովհետև նրանք շատ հարուստ հօրքոյրներ ունէին: Մայր խանութի այս վերջին խօսքից ես կարողացայ նոր հասկանալ թէ անգլիացիք ինչն են այդքան մեծ խնամքով պահում ու յարգում իրանց պառաւներին:

— Յետոյ, գալով ամուսնուս, օ՛, նա շատ բանի ամուսին է, ասաց նա: Նա հարուստ է և շատ բարեսիրտ է. մի խօսքով նա կատարեալ ամուսին է: Ծիշտ է, նա պարտաւոր է իր որդոց համար ապագայ պատրաստել, բայց նա այնքան հարուստ է որ կարող է առատաձեւն լինել դէպի իր դստերն էլ:

— Մաշալլան, մաշալլան, ասացի ես. նա պարարտ էլ է: Ասացէք խնդրեմ, ի՞նչ է նրա անունը:

— Հօգ, ձերդ վսեմափայլութեան ծառայ, պատասխանեց նա: Դա Սկոթլանդական մի հին գերդաստանի անունն է:

— Փէնա րէ (սոդա²⁾), բացականչեցի ես ինձ ու ինձ. հօգ, պի՛ղծ գազանի գերդաստանից, ³⁾ և այն էլ հին խոգերի: Օ՛, բախտս լաւ ասել է որ ընկել եմ այսպիսի ընտանիքի մէջ:

Յետոյ ես հարցրի.

— Տիկին, ապա ի՞նչ են ձեր և ձեր աղջիկները անունները:

— Մենք բոլորս էլ Հօգեր ենք կոչւում, ասաց նա: Այս աղջկիս—ներկայացնելով իր ամենամեծ աղջկան—սրա անունը Մէրի է. երկրորդին՝ Բէսի, իսկ երրորդին՝ Ջէսի:

¹⁾ Եղակրատ.

²⁾ Բեզ եմ ապաւինում քի Աստուած:

Մ. Թ.

³⁾ Հօգ (Hog) անգլիէն նշանակում է խոզ. բայց այս գերդաստանի անունը Hogg է գրւում:

Մ. Թ.

Այս ծանօթութիւնից յետոյ՝ աղջիկներն իրաւունք համարեցին հետս խօսել, և, կամաց կամաց մենք մտերմացանք, մէկ եղանք։ Նրանք իրանց հարցերով ինձ ճշեցին։ Ամենամեծը հետաքրքրուեց թէ արդեօք մենք մեր երկրի հրէաներին չէինք աշխատում հաւատափոխ անել. երկրորդը շատ ցանկացաւ իմանալ թէ արդեօք ես լինում էի Ալմաթների շրջանի մէջ. երրորդը հարցրեց թէ իմ կարծիքն ի՞նչ էր Իսթանբուլի ¹⁾ մասին, թէ արդեօք նա մեծ աշխարհակալ չէր։

Նրանց այս բոլոր հարցերին և իմ հարցերին և իմ տուած պատասխաններին՝ մայր խանութը շատ մեծ հաճութեամբ ակնաշդ դրեց։ Նրեք քայրերի ամենագեղեցիկի խօսակցութիւնը սկսում էր կամաց կամաց գրաւել ինձ. նրա լուսնաւառ զէմքն ու սիրուն, ծփուն մազերը սկսում էին յափշտակել ինձ. բայց յանկարծ վարագոյրը իջաւ և հանդիսատեսներն սկսեցին հեռանալ։

Հայր Հօգը, ֆրանկների սովորութեան համեմատ, մի կարտ տուեց ինձ և թոյլտուութիւն խնդրեց մի անգամ ինձ այցելելու։

Մենք բաժանուեցինք։

Իմ դեսպանական դիմաւորութիւնը շատ կարճատև եղաւ. որովհետև իմ նոր ծանօթները, — արդեօք իմ տեսքին նայելով և ինձ լաւ գննելով խելքներին եկաւ որ ես չէի կարող այդպիսի մի մեծ անձնաւորութիւն լինել, թէ արդեօք լոկ հարցասիրութիւնից էր՝ չգիտեմ, — բայց նրանք, վերջապէս, մի կերպ կարողացան իմ մէհմանդարից տեղեկանալ՝ թէ ես իսկապէս ձկ էի, թէ իմ անունն ի՞նչ էր, թէ ի՞նչ տիտղոս էի կրում և ի՞նչ էր պաշտօնս։

Թէ արդեօք նրանք իմ մասին լաւ կամ վատ գաղափար էին կազմել՝ ես փոյթ չունէի իմանալու, բայց քաջայայտ էր որ նրանք նշանաւոր անձինք էին և ես բաւական երկար ժամանակ ապրելով անգլիացիների մէջ՝ կարողացայ իմանալ որ, նրանց՝ Հոգեան ընտանիքի տենչն ու ջանքն այն էր, որ բարեկամութիւն հաստատէին մեծ մարդկանց հետ։

«Ալլահ, Ալլահ, բացականչեցի ես, որքան տարբեր են պարսիկները։ Միջին դասակարգի մի պարսիկ վախճում է մի խանից այնքան՝ որքան սարսափում է տնաքանդ լինելուց։ Այդպիսի մարդը մի խանի մօտ գնայիս՝ թագցնում է իր հարստութիւնը և հագնւում է իր ամենավատ շորերը...»

1) Ադեբասդը։ Մ. Ք.

Ինչ և է, ես գլուխս չցաւեցրի հետաքրքրուելու թէ արդեօք իմ վարքն ու դիրքը թատրոնում ինչ տպաւորութիւն էին թողել. որովհետեւ հետեւեալ առաւօտը իմ բարեկամ Հոգերն մեր տան դուռը դալով՝ թողեցին մի քանի կարտեր, որով նրանք խնդրում էին «Միրզա Հաջի Բաբայից ընթրել պարոն և տիկին Հոգերի հետ՝ առաջիկայ ամսի այս ինչ օրը»:

«Ինձ թւում է, մտմտացի ես, որ նրանք մի քիչ հաւատում են աստեղագէտներին, քանի որ նրանք անկասկած նշանակել են մեր ծովի ամսի՝ առաջին օրը, երբ մոլորակների աջողակ հանդիպումն է լինում»:

Ես բոլորովին գաղտնի էի պահում Միրզա Ֆիրուզից՝ իմ նոր բարեկամների հետ ծանօթանալը, որովհետեւ թէպէտ ես կարող էի առանց նրա գիտութեան (նա բոլորովին անհոգ էր իմ ուր դնալու մասին) գնալ նրանց մօտ, այնուամենայնիւ զգում էի որ ինձ համար բարեկամներ ընտրելով՝ կարող էի գրգռել նրա սաստիկ նախանձը, և առիթ տալ նրան յանդիմանելու ինձ:

Միևնոյն ժամանակ, ես չէի կամենում որ Ֆրանկները հասկանային թէ ես մինչև ինչ աստիճան հպատակութեան մէջ եմ իմ իշխանաւորի առջև: Անգլիացիք շատ քիչ են իմանում թէ բռնակալ ազգերի մէջ՝ մի ստորադաս մինչև ինչ աստիճան հնազանդ և հպատակ պիտի պահի իրան իր աղայի առջև: Ինչպէս երևում է, անգլիացիները բոլորովին անկախ են իրարից, և իմ բարեկամ Հոգը իր գլխարկը թեք դրած՝ մի արքայորդու կողին քսուելով անցնում, շարունակում է իր ճանապարհը, առանց ամենեկին վախենալու, սակայն ես իմ հայրենի երկրում այդ համարձակութեամբ չեմ կարող վերաբերել դէպի մի շահագոյէի խոհարարի աշկերտը...

Իմ անհաւատ բարեկամ երիտասարդների՝ ամեն օր ինձ հետ ունեցած խօսակցութիւններից՝ մի նոր միտք ծագեց գլխումս: Ես յիշեցի այն բոլոր խօսքերը որ տիկին Հոգն ինձ ասել էր այն հարստութեան մասին, որով իր աղջիկներն ապագայում օգտուելու էին, և մտածեցի թէ ինչու ես էլ չաշխատեմ մասն ու բաժին տանել նրանց այդ օժտից:

Ժիշտ է բախտախնդրութեանս առաջին փորձը շատ անյաջող էր անցել, և Շաքարլաբիի ինչ պէս և նրա դե աղախինների այն աղաղակները, որով նրանք ինձ դուրս քշեցին տանից՝ դեռ հնչում էին ականջներումս. բայց ինչ մեծ տարբերութիւն կար նրա՝ Շաքարլաբիի և լուսնիւրեւ Բէսիի մէջ:

Անգլիական բազարներում ես չիբուխի կոթեր չէի ծախել, և ես կարող էի մի պարսիկ բէգլարբէգի որդի համարուել

Հոգեբերի մօտ: Եւ ինչքան ես նրանց հեռու պահէի Միրզա Ֆիրուզից, այնքան շատ բան էի կարող անել: Եւ կարող էի ամուսնանայ մի գեղեցիկ անհաւատ աղջկայ հետ: Ես կարող էի հազարներ թէր դառնալ նախ քան դեռ պանը կամ իմ հայրենակիցներից որ և է մէկը կարողանար մարդկանց աչքերի թողը սրբել և զրկել ինձ իմ բախտից:

«Մպահանցուն մենակ թող իր վիճակը բարուդեղութեամբ, ես յիշեցի այդ խօսքը գաղտնի բաւականութեամբ: Միթէ ես բաւական գեղեցիկ չեմ՝ սիրտ գրաւելու համար: Մօրուքս դեռ այնքան սև է, ինչպէս էր առաջին օրը՝ հրե դա մօրուք կոչուեց, և եթէ տեղ տեղ մէկ կամ հրկու գորշ մազ են երևում՝ միթէ մենք առատ և սև գոյն չորենք մեր տանը որ բոլորովին սևացնեմ: Ես այժմ սկսել եմ անպլերէն խօսել, և եթէ այդ լեզուով կարողանամ կատարել կէսնայն չըրմ՝ և հըմ՝¹⁾ որ ես կատարում եմ իմ լեզուով, ճ, Ալիի հոգին վկայ, ես կարող կը լինեմ ֆրանկների ամենախմաստունի մօրուքը ձեռք առնելով կ'ուզի լինի—թէկուզ Աֆլաթունի²⁾ հայրը լինի: Բացի այդ, աղջիկը, այդ հրեշտակ աղջիկը ինքնատիքեան մի գոհար է— մի թանկագին գոհար, և եթէ ես բաւական բախտաւոր լինեմ որ կարողանամ նրան տէր դառնալ և թէհրան փոխադրել, ով գիտէ, նրան Շահին նուիրելով՝ ես ինչ բարձր պաշտօնի և աստիճանի կ'արժանանամ:

Գլ. հղ.

Հացի Բաբան այցելում է Հոգեբերին:—Եւ խօսում է անդերէն:—Սխալներ է անում եւ զարմանք շարժում:

Ես իրաւացի համարեցի շատ հետաքրքրուել և սովորել այն բոլոր կարգ ու սովորութիւնները, որ պահպանուած են անգլիական ընթերիքների ժամանակ, որպէսզի մի ստակալի յանցանք չգործէի այն ընթերիքի սեղանի վրայ, որին Հոգեբեր հրաւիրել էին ինձ:

Ես տեղեկացայ որ թէև ինձ այս օր էին հրաւիրել ընթերիքի, բայց և այնպէս սխալ բան արած չէի լինիլ, եթէ այդ օրից առաջ էլ այցելէի ինձ հրաւիրողներին:

Եւ ես այցելեցի նրանց:

1) Ընկերական զրոյց, ծ. Թ.

2) Գլատան, ծ. Թ.

Նրանք բնակւում էին քաղաքից դուրս տանող ծառուղի-
ներից մէկի վրայ: Նրանց տան դուռը հասնելով՝ եւ այնքան
անընդհատ զարկեցի մինչև մէկը եկաւ բաց անելու: Եւ դիտ-
ւածք շատ զարկեցի, որովհետև գիտէի որ այդպէս անելով՝
շատ չէի սպասիլ տան դրան, և իմ արժանապատւութիւնը չէր
վիրաւորուիլ: Երբ տան ծառան շտապմամբ, զարմացած ու բար-
կացած՝ դուռը բաց արաւ, եւ տեսայ որ լաւ բարեբաստ ժա-
մանակ էի հասել. որովհետև երբ ես ծառայից հարցրի թէ
«աղան տանն է», նա պատասխանեց «ոչ», և աւելացրեց որ
«խանութիւն ու նրա աղջիկները տանն են»: Եւ երբէք չէի կար-
ծում որ ինձ կը յաջողուէր այդպէս հեշտութեամբ մտնել մի
անգլիացու հարեմ: Եւ ներս մտայ, և երկար սանդուխները
բարձրանալիս՝ ժամանակ ունեցայ լաւ ոլորել բեխերս և հար-
թել մօրուքս: Գլխարկս էլ շտկեցի, թեք դրի, զիւլֆերս նո-
րից ոլորեցի և շալս էլ պինդ քաշեցի: Այս բոլորը կատարեցի
մի հաստամարմին անհաւատի ետևում, որն ինձ առաջնորդում
էր և երբեմն էլ ետ էր նայում տեսնելու թէ արդեօք ես հե-
տևում էի իրան: Երբ հասանք սանդուխների զլուխը, նա կանգ
առաւ և վստահաբար հարցրեց անունս:

Այս բանն եւ չսիրեցի, որովհետև յիշեցի թէ այդ նոյն
բանն ինչպէս էին հարցրել ինձ՝ Շաքարլաբի կատաղի սպասա-
ւորները, և թէ ինչպէ՞ս շուտով նոյն սպասաւորները արացե-
լով ինձ դուրս էին քշել նրա տանից:

Այդ, այդ հարցն ինձ դուր չեկաւ, և ես իմ լեզուով ասա-
ցի «բէ շովա չէ՞»¹⁾: Մենեակի դուռը բաց անելով, նա բար-
ձրաձայն յայտարարեց անունս սրպէս «բէ շովա չէ», և ինձ
ներս առաջնորդեց:

Տիկին Հոգն և իր աղջիկները շատ մեծ հաճոյքով և քաղ-
ցրութեամբ ընդունեցին ինձ: Տիկինն սկսեց շատ ներողու-
թիւն խնդրել որ իր ծառան ինձ չճանաչելով անգիտօրէն սխալ-
մունք էր արել անուանս նկատմամբ:

— Որովհետև, ասաց նա, դուք միւրզա էք. չէ՞, այդպէս չէ՞:

Այո, տիկին, պատասխանեցի ես. ի՞նչ ծառայութիւն եմ
կարող անել ձեզ:

— Բայց ձեր երկրում Միրզան²⁾ իշխան է, ասաց նա.

1) Բեզ ինչ, ծ. Թ.

2) Պարսկաստանում միւրզա այն ժամանակ է իշխան նշանակում երբ
անուան վերջն է գործ ածւում. օրինակ Ալի Աքբար միւրզա. բայց երբ աս-
ւում է Միրզա Ալի Աքբար՝ նշանակում է որ մարդը գրագիր է. ծ. Թ.

գոնէ մենք այդպէս ենք հասկացել Մորիէրի ճանապարհորդութիւնից. արդեօք սխալ չե՞նք իմացել:

—Նա՛ Մորիէրը, երբեմն շատ սխալներ է անում, բայց այդ ուղիղ է, ասացի ես անգլերէն լեզուով:

Ջքնաղ Բէսին յետոյ հարցրեց թէ արդեօք հայրս է՞լ Միլզա էր եղել, և թէ արդեօք ես չէի եղել իշխանների մի երկար շարքից: Ես նրան հաւաստիացրի որ մեր երկիրը կարող է իսկապէս իշխանների երկիր կոչուել. որովհետեւ մենք մեր երկրում իշխան ենք դառնում մեր ցանկացած ժամանակ: Ես նրան հասկացրի որ մի արքայորդու և իմ մէջ եղած տարբերութիւնը այն է որ «նա իր տիտղոսն իր ետեից է տանում, իսկ իմս իմ առջևից է գնում», և որ այս խտրութիւնն այնքան աննշան, այնքան չնչին է, որ մեծ տարբերութիւն չկայ իմ և նրա կարծեցեալ իրաւունքների մէջ...

Բոլորովին զուարճալի էր տեսնել թէ իմ այս խօսքի վրայ, նրանք ինչպէս սկսեցին պատուել ինձ իշխան բառով: Կասես թէ այդ բառը դեռ երբէք նրանք չէին արտասանել... Ամեն մի խօսք որ նրանք ուղղում էին ինձ՝ իշխան բառովն էին սկսում: Նրանք այնքան կրկնեցին այդ բառը. մինչև որ վերջը, ինքնապաշտպանութեան համար՝ ես պարտաւորուեցի մի քանի հարցեր տալ նրանց:

—Ապա ճիտեղ է ձեր հայրը, հարցրի ես գեղեցկադէմ Բէսիից:

Նրա մայրը պատասխանեց:

—Նա գնացել է քաղաքը, ամեն օր նա գնում է իր գործին և վերադառնում է երեկոյեան:

—Ա՛, ուրեմն նա վաճառական է, ասացի ես: Մեր երկրում էլ այդպէս է. վաճառականը նստում է քաղաքում ամբողջ օրը, իսկ գիշերը փակում է իր խանութը և վերադառնում է տուն: Բայց նա ի՞նչ է վաճառում, տիկին:

—Պարոն Հոգը խանութ չէ պահում, ասաց տիկինը մի աստիճան մեծամտութեամբ, նա «Արևելեան Հնդկաց» վաճառական է:

—Ուրեմն, գուցէ նա խոզի ապուխտ է ծախում, ասացի ես, մտածելով որ գուցէ նրա անունը արտայայտիչ է իր կոչմանը, ինչպէս Պարսկաստանում շատ անգամ այդպէս է:

—Սողի ապուխտ, բացականչեց տիկինը, նա ինչո՞ւ պիտի խոզի ապուխտ ծախի:

—Որովհետեւ նա Հոգ է, տիկին. մեր երկրում վաճառականները կոչում են այն յատուկ բանի անունով որ նրանք ծախում են:

—Օ՛, իշխան, ի՞նչ տարօրինակ սովորութիւն է դաւ Հոգ մի հին գերդաստանի անունն է և ոչինչ կապ չունի խոզի հետ: Հոգեր կան թէ Անգլիայում և թէ Սկովտիայում,

—Եթէ այդպէս է, իշխան, ասաց Ջէսին, ուրեմն դուք կարող էք նոյնպէս ասել որ, Սըր Ֆրանսիս Բէկընը¹⁾—Երեւի լորդ Վերիւլամը խոզի միս ծախող էր:

—Ուրեմն, իշխան, բոլոր այն մարդիկը որոնց անունն է Սմիթ¹⁾ Տէյլըր, Կուպըր, Բէկըր, Կուկըր և հազարաւոր ուրիշ ներք, կոչւում են իրանց արհեստի կամ պաշտօնի անունով:

—Լաւ, ես այդպիսի բան չէի լսել, վերջացրեց տիկինը: Պարոն Հոգը, խոզի ապուխտ ծախող, լաւ, իշխան դուք ինչե՞ր էք մտածում:

Ես շուտով տեսայ, որ անգգուշաբար՝ աչքերս գոցած՝ մտել էի մի արգելւած սրբատեղի, և աշխատեցի իսկոյն դուրս գնալ այդ տեղից: Ես ներողութիւն խնդրեցի ամենալաւ ձևովը որ կարող էի, և ասացի:

—Ներեցէք ինձ, ես քայլում եմ առանց ունենալու մի առաջնորդ, որ ինձ սովորեցնի անգլիական սովորութիւնները: Մեր երկրում երբէք ամօթ չէ վաճառական լինելը:

Եւ իմ տուած վէճքերը բուժելու համար՝ աւելացրի:

—Տիկին, պարոն Հոգը գուցէ հնդկաց թագաւորներից մէկն է:

—Ո՛չ, իշխան, ասաց տիկինը, ըստ երևոյթին բոլորովին հաշտ. ո՛չ, մենք դեռ նրան կոչում ենք կառավարիչ և ո՛չ թէ թագաւոր: Բայց պարոն Հոգը յոյս ունի և սպասում է շուտով այդ աստիճանի հասնելու. նա դեռ կանկալ²⁾ է անում:

Ես ուզում էի հարցնել թէ ի՞նչ է նշանակում «կանկալ անել»։ Բայց դէրվիշանման Մէրին, շատ նուաճուած ձայնով հարցրեց թէ արդեօք ես ծանօթ էի վերջերս Պարսկաստան գնացած միսիօնարներից որեւէ մէկի հետ:

—Այո, օրիորդ, ասացի ես, ճանաչում եմ Փադրի կոչուած մէկին, որին Սպահանի մոլլաները քիչ էր մնում սպանէին: Այդ Փադրին նրանց երեսին՝ արձակ համարձակ ասում էր որ իբր թէ մեր Մարգարէն վատ մարդ էր, խաբեբայ էր. մոլլա-

1) Bacon՝ իբրեւ հասարակ անուն՝ նշանակում է ապուխտ. Ժ. Թ.

1) Smith իբրեւ հասարակ անուն՝ նշանակում է դարբին. Tailor, որ իբրեւ յատուկ անուն Taylor է գրւում՝ նշանակում է՝ դերձակ. Cooper՝ տա-կաւաղործ, Baker՝ հացթուխ. Cooker՝ եփող, խոհարար. Ժ. Թ.

2) Canvass որպէս բայ նշանակում է ձայն հաւաքել. Ժ. Թ.

ները նրան ասում էին թէ պապը էշ է. վերջն սկսեցին նրան քարկոծել. բայց նա փախաւ:

— Բայց ձեր մոլլաները շատ սխալ են վարուել նրա հետ, ասաց Մէրին կարմրելով. նրանք ինչո՞ւ քրիստոնեայ չդարձան:

— Այդ հեշտ բան չէ, օրիորդ, ասացի ես: Շահը նրանց ականջները կտրել կը տար. բացի այդ՝ քրիստոնեաները կեղտոտ մարդիկ են Պարսկաստանում. նրանք խոզի միս են ուտում, գինի են խմում. նրանք աւելի վատ մարդիկ են քան հրէաները: Իհարկէ անգլիացիները նրանց պէս չեն. անգլիացիները բոլորն էլ մաքուր և հարուստ մարդիկ են: Պարսկաստանի հայերն ու քրիստոնեաները շատ աղքատ, շատ կեղտոտ, շատ վատ մարդիկ են: Պարսկաստանում մի աղքատ մուսուլման աւելի լաւ է քան ամենահարուստ քրիստոնեան:

— Բայց անշուշտ, ասաց այս մոլլան օրիորդը, դուք Պարսկաստանում մտածո՞ւմ էք ձեր հոգու փրկութեան համար. չէ՞ք մտածում, իշխան:

— Այո, ասացի ես կատակելով. այո, մենք շատ ենք մտածում մեր ճշմարիտ ոգու համար. բայց աւելի մտածում ենք մեր ոտների տակերի ¹⁾ համար:

Ես հաւատացրի նրան թէ իսկապէս ես շատ անտարբեր մի մուսուլման էի, և թէ ես վստահ գիտէի որ, երբ Պարսկաստան վերադառնամ՝ մեր մոլլաները ինձ խիստ ապաշխարութեան կը ենթարկեն: Ես ասացի որ եթէ մեր մոլլաները մի թեթեւ գաղափար կազմէին, կամ մի շշուկ լսէին որ ես իբր թէ քրիստոնեայ եմ դարձել, նրանք ինձ կը հալածէին մինչև յուսահատութեան վերջին աստիճանը, և թերևս կը սպանէին ինձ:

— Թող Գէորգ Թագաւորը, շարունակեցի ես, գայ Պարսկաստան, շատ զօրք բերի իր հետ, Պարսկաստանը տիրի, մի նոր Թագաւոր նշանակի, անյն ժամանկ գուցէ պարսիկներս քրիստոնեայ կը դառնանք: Մէկ փաղրին մենակ չչինչ չէ կարող անել. Պարսկաստանում բոլոր գործերը կատարւում են սրի ուժով:

— Բայց մենք շատ աւետարաններ ենք ուղարկել Պարսկաստան, նրանք շատ բարիք պիտի անէին պարսիկներին:

— Աւետարանը շատ լաւ բան է, օրիորդ, ասացի ես. պարսիկները չէին ասում թէ վատ է. դորանն էլ լաւ է, մուսուլմաններն ասում են որ ձեր Մարգարէն լաւ մարգարէ է. բայց

¹⁾ Հոգի'soul, իսկ ոտի տակ sole, երկուսն էլ գրեթէ նոյնահնչիւն. ծ. Թ-

դուք էլ ձեր կողմից չէք ասուի թէ «ձեր մարգարէն էլ լաւ մարգարէ է»:

—Ա՛, ասաց օրիօրդ մոլլան, նախ քան դուք մեզնից հեռանաք՝ մենք քրիստոնեայ կը դարձնենք ձեզ: Դուք դեռ մեր եկեղեցին չէք գնացել: Եղե՛լ էք:

Ես պատասխանեցի որ դեռ երբէք չէի գնացել իրանց եկեղեցին, և որ, յիշաւի, երբէք չէի համարձակուել մտնել քրիստոնեաների աղօթատեղին, որովհետեւ վախենում էի որ ինձ հետ կոպտաբար վարուէին: Ես աւելացրի որ, եթէ մի քրիստոնեայ համարձակուէր մտնել մեր մէջիդը, հարիւրից ինսունը հասնատ է, որ նա դուրս կը գար այնտեղից ջախջախուած, կաշին տիկ հանած. և ես վախենում էի որ Անգլիայում ես էլ նոյն պատիժը կրէի, եթէ համարձակուէի մտնել քրիստոնեաների ժամը:

Օրիորդը՝ մոլլահ Մէրին ինձ հաւաստիացրեց որ իրանց բոլոր եկեղեցիները բաց են ամեն կրօնի և հաւատի տէր մարդի համար, և որ իրանց մոլլաները միշտ յուսով սպասում են պատենութիւնների՝ որ կարողանան ամեն մի անհաւատի սխալները ուղղել և ճշմարիտ հաւատին դարձնել: Նա յետոյ շատ թախանձանքով հրաւիրեց ինձ՝ հետևեալ առաւօտը իրանց հետ գնալ իրանց եկեղեցին: Ես վերջապէս համաձայնեցի:

Ես ելայ տուն վերադառնալու. բայց մայր խանումը շատ քաղցրութեամբ խօսեց հետս ասելով.

—Ես յոյս ունիմ որ դուք յաճախ կը գաք մեզ մօտ:

—Ուրախութեամբ, տիկին, ասացի ես:

Բէսին էլ, որի հայեացքները յաճախ հանդիպում էին՝ ժպտաց, և լաւ պարսկերէնով ասաց.

—Մօղա հավէզ շումա:¹⁾

Այս բանի վրայ ես զարմացայ, բայց տիկինն ինձ հաւաստիացրեց որ այն օրից, ինչ իր աղջիկներն ինձ տեսել էին թատրոնում, այո՛, այն օրից՝ նրանք ուրիշ բանի վրայ երբէք չէին մտածել, այլ նրանց ուշքն ու միտքը միշտ իմ վրայ էր հղել: Նա աւելացրեց որ, Մէրիի միակ ցանկութիւնն այն էր որ ինձ քրիստոնեայ դարձնէր. որ Բէսին արդէն լաւ սովորել էր պարսկերէն լեզուի քերականութիւնը, և որ Զէսին ուրիշ բանով չէր զբաղուել, այլ միայն շատ եռանդով և հետաքրքրութեամբ պարապուել էր պարսից պատմութեան ուսումնասիրութեամբ:

Տիկնոջ այս խօսքերը ինձ մեծ բաւականութիւն պատ-

¹⁾ Մնաք բարով ասելու սովորական ձեւը, որ նշանակում է՝ «Աստուած ձեզ պաշտպան». ծ. թ.

ճառեցին, որովհետեւ ես տեսայ որ իմ այս ընտանիքի հետ ծանօթանալու և նրանց շնորհիւ բախտի համեմուտ յոյսըս հետու չէր իրագործուելուց: Նշոյլները շատ խրախուսիչ էին:

Վերջապէս, ես մնաք բարով ասացի և հեռացայ: Ուրիշ ոչինչ բանի վրայ չէի կարողանում մտածել: Ես մտածում էի միմիայն այն բաների վրայ, որ ես նոր տեսել և լսեա էի:

«Ալլահ Աքբար» բացականչեցի ես. միթէ կարելի է սրանց կին կոչել. ո՛չ նրանք վէզիր ու մոսթոֆիններ են: Ո՞վ էր տեսել որ կանայք կարողանայն խօսել այնպէս՝ ինչպէս սրանք են խօսում: Մեր կանայքն ի՞նչ հոգ ունին ուրիշ ազգերի կրօնական զգացումների համար: Մեր կանայք երբէք մտածում են ուրիշ լեզու էլ սովորել. բացի իրենցը: Գալով մեր կանանց, նրանց մէջ ձր մէկը կայ, որ գէթ իմանում լինի թէ ով էր Ջէմալդը, և ով էր Շափուրը:

Գլ. ԼԵ.

Հաջի Բարան գնում է անդլիսցուց եկեղեցին:—Նա համեմատում է իրանց մեջիդի հետ:—Նա լսում է մի երիտասարդ քարոզչի խօսքերը:

Հետեւեալ առաւօտը ես կրկին գնացի իմ նոր բարեկամների տունը: Այդ օրը անգլիացիների ջումման¹⁾ էր: Եկեղեցիների զանգերը ղողանջեցին. կին ու մարդ, հարուստ ու աղքատ, մեծ ու փոքր դուրս եկան փողոցները ալօթքի գնալու համար: Նրանք այնպէս ժամանակին դուրս եկան և լցուեցին փողոցները որ մարդ կարծում էր թէ գնալու էին իրանց Շահի պալատը: Նրանք բոլորն էլ բազմութեամբ մտան եկեղեցին:

Պատշաճ յարգանքներ մատուցանելով Հոգեբնին, խօսքս ուղղեցի Մէրիին և ասացի.

—Որքան աւելի լաւ կը լինէր, եթէ ձեր եկեղեցիների դռներն էլ միշտ բաց լինէին, ինչպէս մեր մէջիդներինը: Եթէ այդպէս լինէր՝ այն ժամանակ ամեն մարդ կարող կը լինէր եկեղեցի գնալ ինչ ժամանակ որ իրան յարմար լինէր. այն ինչ այժմ, այստեղ քաղաքի բնակիչների միայն մի մասը կարող է եկեղեցի մտնել. որովհետեւ եթէ բոլորը միասին և միաժամանակ մտնելու լինին՝ տեղ չի լինիլ: Ալօթք անելու համար՝ մի մուսուլման բաւական է ունենայ. մի լուռ անկիւն, մի դէ-

1) Մահմեդականաց հանգստութեան օրը (ուրբաթ), ժ. Թ.

բլէ և մի փոքրիկ կարպետ. դրանցից աւելի ուրիշ ոչինչ հարկաւոր չէ նրա համար:

— Մեր հասարակաց ժամերգութիւնը կանոնաւորում է կառավարութիւնը, ասաց Մէրին:

— Ահա, ասացի ես, այդտեղ մենք տարբերում ենք ձեզանից. որովհետեւ թէպէտ մեր Շահը մի կատարեալ բռնակալ է, այնուամենայնիւ նա չէ կարող ստիպել ինձ իմ կամեցածից աւելի «Ասլաֆորէլլան»-ներ, կամ պարտաւորացնել ինձ արտասանել «Ֆաթէն», եթէ ինձ հաճելի չէ: Նա երբէք չէ վերահսկում տեսնելու թէ արդեօք ես լուանձն եմ ոտներս կամ սանտրում եմ մազերս, կամ կտրում եմ եղունգներս. այդ բոլորը մնում են իմ խղճիս վրայ:

Մեր այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ ճանապարհին՝ եկեղեցի գնալիս, որից առաջ՝ ես արդէն ծանօթացել էի պարոն Հոգի և նրա մեծ որդու հետ: Մենք խմբով մտանք եկեղեցին, ուր մարդիկ ու կանայք միասին նստած էին աթոռների վրայ: Պիտի խոստովանուեմ որ ես կարծում էի թէ զոնէ եկեղեցում քօղն անհրաժեշտ պիտոյք կը համարուէր կանանց համար, և որ թագաւորը իր հրամանով ստիպողական պիտի դարձրած լինէր դրա գործածութիւնը, որովհետեւ մի էր կարող իրան զսպել և չնայել նրանց... Իմ կողմից, պիտի ասեմ որ երբէք չէի կարողանում զսպել ինձ. ամբողջ ժամանակը աչքերս լուսներէս Բէսիի վրայ էին:

Ես կարողացայ բաւական բան հասկանալ մի փոքրիկ սեկազով գրքից, որ Բէսին դրեց ձեռքս: Այդ գրքի մի քանի հատուածները մեծ տպաւորութիւն թողին վրաս. նրանք ինձ յիշեցրին մեր օրհնեալ ղորանի մի քանի հատուածները: Այդ լսւ էր, բայց եկեղեցում հաւաքուած ժողովրդի վարքը օրինակելի չէր. ես չհաւանեցի:

Խնքը՝ փիշ նամագը ¹⁾ այնքան լուրջ չէր որքան պէտք է լինէր. նա ոչ խորհրդաւոր կերպով շարժում էր իր գլուխը և ոչ էլ երեմն ճօճում էր մարմինը, ինչպէս անում են մեր սրբերի դէմքեր ունեցող մուլանները:

Ժողովուրդն էլ՝ ոմանք այս կողմն էին նայում, ոմանք այն կողմը. միայն մի քանիսն էին որ, ինչպէս երևում էր, ազօթում էին ջերմեռանդութեամբ: Բայց ընդհանրապէս՝ բոլորն էլ այնպէս էին պահում եկեղեցում, ինչպէս պահում են իրանց տներում: Հարուստների համար կային փափուկ, գեղեցիկ բարձեր, նրանց վրայ հանգիստ նստելու համար.

1) Աղօթքի առաջնորդ, քահանայ. ծ. Թ.

խակ աղքատների համար՝ կային աւելի լաւ յարմարութիւններ քան նրանք ունէին իրանց տներում:

Եթող սրանք գնան մի մահմեդական երկիր, մտածեցի ես, և այնտեղ սովորեն ճշմարիտ լրջութիւն և բարեպաշտութիւն: Մի մուսուլման կարող է իր աղօթքն ասել հազարաւոր մարդկանց մէջ՝ առանց իր գլուխը դէպի աջ կամ ձախ դարձնելու: Նա նստում է իր կրունկների վրայ և երբէք կարիք չունի այն փափուկ բարձերի և աթոռների, որ ֆրանկները գործ են ածում իրանց եկեղեցում: Նա կարիք չունի որ և է գրքի որ նրանով աղօթի, որովհետև այն օրից որ նրան սովորեցրել են իր ասելիք աղօթքը՝ նա անգիր գիտէ, և երբ նա կարգում է դորանը, միակ ծէսը որ նա պիտի կատարի՝ այն է որ նա պիտի լուսնայ իր ձեռները, նախ քան այդ սուրբ գիրք վերցնելը: Արդ, այս ֆրանկները, մտածեցի ես, վերցնում են իրանց սուրբ գիրքը ճիշտ այնպէս ինչպէս, վերցնում են մի հասարակ գիրք: Լուսացուած կամ չլուսացուած ձեռները նոյնն են նրանց համար:»

Տեսնելով որ եկեղեցում ամեն մարդ նստում կամ կանգնում էր ինչ ժամանակ որ սիրտն էր ուզում, նաև նկատելով որ մարդիկ դէպի մի որոշ կողմը չէին դարձնում իրանց երեսները՝ հետաքրքրուեցի պարոն Հոգից թէ քրիստոնեաների Ղէրլէն ռը կողմն է, սակայն նա կարծես ամենեւին չհասկացաւ իմ հարցը:

— Կօբլըր¹⁾ էք հարցնում, ասաց նա. մեր եկեղեցում այդպիսի անձն ամենեւին չէ կատարում քահանայական պաշտօն:

Ես նրան հասկացրի որ ես նշանակում էի այն կէտը, դէպի ուր աղօթելիս՝ պիտի դարձնէին իրանց երեսները. որովհետև ես միշտ կարծել էի որ քրիստոնեաների Ղէրլէն Երուսաղէմն է, ինչպէս մահմեդականներին Մէքքան է:

Միակ բանը որ նա կարողացաւ ինձ հասկացնել, այն էր որ եկեղեցում նրանք միշտ կանգնում են երեսները դէպի քարոզող քահանան, ինչպէս և դէպի երգեհոնը որ նուագում են երգի ժամանակ:

Ես նկատեցի որ իմ շատախօսութիւնը եկեղեցում՝ գրաւել էր բոլորի ուշադրութիւնը. մարդիկ զարմացած նայում էին

1) Cobbler (հնակարկատ) փինայի, Հաջի Բաբան, Լեւի Ղէրլէ բառը անգլիէէն լեզուով «կէրլը» է արտասանել, և Թերես Հոգի ազանջին Cobbler է հնչել, Ժ. Թ.

ինձ. ուստի ես ստիպուեցի լսել, թողնել հետաքրքրութիւնս: Այո, ես լսեցի և յօժար ազանջ դարձրի այն գեղեցիկ ձայներին, որ գալիս էին երգահոնի մօտից. այդպիսի եղանակներ ես դեռ չէի լսել:

Երգահոնին ձայնակցող երեսանների երգելն այնքան տալաւորութիւն չթողեց վրաս, որքան թողնում էին՝ մեր հաւատի դաւանանքը հրգող և հաւատացեալներին աղօթքի հրաւիրող մուէզիկներին ձայները, ուր մնաց որ այդ երեսանների երգը համեմատուէր այն ոգևորիչ «ոթ(թըէ)»-ին¹⁾, որ երգում են Տիեզերքի Ապաւենի համար:

Այն ժամանակ՝ որ իմ կարծիքով ժամասացութիւնը վերջանում էր և ժամաւորները պիտ ցրուէին՝ յանկարծ մի երիտասարդ մուլահ բարձրացաւ ամբիօնի վրայ՝ քարոզելու: Եւ ես զարմացայ թէ եկեղեցում գտնուող բոլոր Ռիշւէֆիդներն²⁾ ինչպէս իրանց թոյլ կը տային լսել մի ջահիլ տղայի քարոզչութեան գարմանքս շուտով վերջացաւ, երբ տեսայ որ նա իր գրպանից մի գիրք հանելով՝ պատրաստուում էր կարդալու, ինչպէս եւ կարծեցի, իր մեծերի գրած վարդապետութիւնները: Ես երբէք չէի կարող ենթադրել որ նա կարող էր ինքնուրոյն քարոզ խօսել. որովհետեւ եթէ նա կարողանար՝ այդ արդէն բոլոր ժամաւորներին ծաղրել կը նշանակէր:

Վերջապէս, երբ ամբողջ ժամերգութիւնը վերջացաւ, մենք ելանք և հեռացանք:

Եթէ ես մի քրիստոնեայ լինէի և գնացած լինէի մի մահմէդական մէջիդ, շատ բարեբախտ մարդ կը համարէի ինձ, եթէ այնտեղից կենդանի դուրս պրծնէի. բայց այստեղ փոխանակ վտանգի հանդիպելու, տեսայ որ բոլորը համակրանքով և հաւանութեամբ էին նայում ինձ. մի քանի ժամանակ զարմանում էին թէ ես, որպէս մուսուլման՝ ինչպէս էի թոյլ տուել ինձ, մտնել քրիստոնեաների եկեղեցին:

Յայտնի բան էր որ ես՝ իմ մօրուքով և բարձր, սրածայր փափախով՝ որպէս միակ պարսիկը այնքան մեծ, երեսները լաւ սափրած, անգլխարկ բազմութեան մէջ՝ շատ տարօրինակ տեսք պիտի ներկայացնէի. բայց ես շատ զարմացայ, երբ տեսայ որ իսկապէս շատ քիչ տալաւորութիւն թողեցի:

Տիկին Հոգը առիթը ձեռքից չտալով, ուղղակի և անուղղակի կերպով աշխարհին հասկացրեց, որ ես մի իշխան էի, և

1) Արքայական աղօթք:

2) Սպիտակամօրուքները, ծ. Թ.

նախ բան եկեղեցու տանից մեր դուրս գնալը, նա արդէն ինձ շատերի հետ ծանօթացրեց՝ որպէս պարսիկ շահագրէ: Տուն վերադառնալիս էլ, նա ամեն ընդէն էնձ յիշեցնում էր իմ շահագրէ լինելը:

— Լաւ, իշխան, ասաց նա, ինչպէս էր, հաւանեցիր մեր եկեղեցին և ժամերգութիւնը:

— Ժիշտն ասած, տիկին, պատասխանեցի ես, ձեր ժամերգութիւնը շատ երկար թուաց ինձ, և ես նկատեցի որ այնտեղ եկեղեցում ոչ ոք լուրջ չէր անջնայ, որքան պէտք էր:

— Բայց, իշխան, դուք անշուշտ հաւանեցիք մեր երիտասարդ քարոզչին:

— Իբրև երիտասարդ, տիկին, նա լաւ երիտասարդ էր, բայց մենք արևելցիներս իմաստութիւն չենք սպասում մի ջահիլ բերիշից, որն ինչքան էլ ուզում է՝ թող քարոզի Սողոմոնի իմաստութիւնը և իմամ Մուսայի վարդապետութիւնները. այդպիսի երիտասարդին այնուամենայնիւ ոչ ոք չի ականջ դնիլ. թող նա այնքան քարոզի որ երեսը սևանայ, ոչ ոք նրա խօսքերը չի ընդունելու: Մենք իմաստութիւն ենք սպասում այլխառն մօրուք և ապաշխարութիւն արտայայտող դէմք ունեցողներին—մի խօսքով ծէրերից:

Պարոն Հոգը իմ կողմը հակուելով ասաց.

— Ժիշտ է, թէ ևս չեմ փորձել որ իմաստութիւնը միմիայն ծերերից կարելի է սպասել, բայց ես միշտ ուշադրութեամբ եմ լսում այն խօսքերը՝ որոնք դուր են գալիս ծերունիների բերանից:

Ես աշխատում էի ամեն ընդէն մի կերպով ինձ հաճելի դարձնել Բէսիրին, բայց նրա քոյրը, այդ մոլլահ Մարիամը թոյլ չէր տալիս ինձ՝ նպատակին հասնելու. երբ սկսում էի մի բան ասել, խօսել Բէսիրի հետ, նա խանդարում էր և մի կամ միւս եղանակով ինձ կրօնական նիւթերի շուրջն էր դարձնում: Եւ մինչև ես կարողացայ մի անգամ աչքերիս քնքոյշ հայեացքներով դարձնել այդ պաշտելի կակի վրայ, մոլլահ Մարիամը մի մեծ օրինադիր բաց արեց, դրեց առաջս, և սկսեց ինձ քարոզել՝ հաւատադիրս անելու դիտաւորութեամբ:

Այնքան հաճելի չէր ինձ Մարիամի արածը. ընտանիքի միւս անդամներն էլ չհաւանեցին: Տիկին Հոգը շուտով ճնշեց ինձ այլ և այլ հարցերով: Նա սկսեց հարցնել թէ արդեօք ես ճանաչում էի այս ինչ մեծ խանին, այն ինչ մեծ խանմին. թէ արդեօք ես յաճախում էի այս ինչ պարահանդէսը, այս ինչ ժողովը, և այլ այդպիսի հարցեր: Նա միշտ էր հարցը վերջացնում էր մի հոգոց հանելով, և այդ հոգոցներով կարծես

նա ուզում էր ասել, «երանի թէ ես և իմ աղջիկներս աւելի մեծ թւով ծանօթներ ունենայինք, աւելի յայտնի լինէինք»:

Բոլորովին պարզ էր որ նա ցանկանում էր իմ միջոցով ծանօթանալ և բարեկամանալ աստիճանաւորների հետ: Մէկ տիկին կար, որի անունը նա աւելի յաճախ էր կրկնում քան միւսներինը: Այդ տիկինը, ինչպէս ես հասկացայ, մի տեսակ բանու կամ ինչպէս Հնդկաստանում ասում են՝ բէգում էր—մի անձն՝ որի յօնքերի պաշտպանող ստուէրները աւելի մեծ արժէք ունէր քան Հնդկաստանի ոսկիները: Այդ բանուի տան դրան սեամին էր, որ նրանք ցանկանում էին տրորել իրանց ճակատները, և նրանք կը ցանկանային որ ես իրանց արարողապետը դառնայի, եթէ հնարաւորութիւն լինէր: Եւ ի՞նչի համար էր այս ցանկութիւնը.—նրա համար որ նրանք կարողանային անցագիր ստանալ մտնելու Լոնդոնի երկինքը—Ալմաքնրի շրջանը:

Երբ ես տեսայ որ իմ հրեշտակ Բէսին ամենից շատ էր ցանկանում որ ես յանձն առնէի այս միջնորդութիւնը, պիտի խոստովանեմ որ Ալմաքնրի շրջանը կամ ժողովը, ինձ համար էլ դարձաւ խոստացեալ երջանկութեան երկիրը, և ես իսկոյն սկսեցի խորապէս մտածել՝ նրա ցանկութիւնն իրագործելու համար մի միջոց, մի հնար գտնելու:

Արդէն Հոգեբը շատ մեծ ցանկութիւն էին յայտնել Միւլա Ֆիրուզի հետ ծանօթանալու. բայց, դէ, ես ամենեւին չէի ցանկանում այդ: Այնուամենայնիւ, ես գիտէի որ միմիայն նրա միջոցով կարելի կը լինէր իրագործել իմ չքնաղ Բէսիի ցանկութիւնը:

Բայց թէ ի՞նչ անել. այդ էր դժուարաւուծելի հարցը. այն դժուար էր, և ես մտածեցի առ այժմ կնքել շրթունքներս խոհեմութեան կնքանշխարով և վճռեցի խելքով, զգուշութեամբ և հնարագիտութեամբ ընթանալ:

Գլ. ԼԳ.

Դեսպանը այցելում է Արեւելեան Հնդկաց ընկերութեան կառավարիչներին.

—Հաջի Բաբան հանդիպում է իր նոր բարեկամներին:

Երբ տուն վերադարձայ, տեսայ որ դեսպանը խիստ զրադուած էր՝ կարգադրութիւններ անելով մի պաշտօնական այցելութեան առթիւ, որ տեղի պիտի ունենար հետեւեալ օրը: Նա պիտի գնար Արեւելեան Հնդկաց ընկերութեան պալատը,

որ գտնուում էր քաղաքի մի հեռաւոր կողմում, և որը, ինչպէս մենք լսեցինք, պարունակում էր իր մէջ բազմաթիւ սենեակներ, որոնց մէջ դիզուած էր անվերջ կոյտերով՝ Հինդի, Սէրէնգիբի և Զինի¹⁾ գանձերը։ Դեսպանն արդէն ընտրել էր իր այցելութեան համար հարկաւոր եղած ընծաները, և հրամայել էր իր հետևորդներին պատրաստ լինել։

Ընծաների թւում՝ այն բանը, որով Շահը կարող էր ամենալաւ ձևով ցոյց տալ իր յարգանքը դէպի «կուսպանին»²⁾, իր յօրինած բանաստեղծութեան պատճէնն էր, որ շատ սքանչելի կերպով գրուած ու պատրաստուած էր։ Այդ ոտանաւորը ներփակուած էր եօթը պատուական ծրարների մէջ, և մի բարեփառ ժամանակ պիտի մատուցուէր դեսպանի իսկ ձեռքով։

Հնդկաստանի նախկին կայսրները բանաստեղծների և գեղագրագէտների պաշտպաններն էին, և դուցէ Շահը մտածելով որ այդ երկրի այժմեան տէրերն էլ նոյնպէս սիրում են բանաստեղծութիւնը, յարմար էր դատել այդ ընծան ուղարկել։

Մենք երբէք չէինք կարողանում հասկանալ Հնդկաստանի այդ հաստատութեան սխտեմը, և անձկանօք սպասում էինք այն ժամին՝ երբ մեր աչքով կը կարողանայինք տեսնել, ըմբռնել և համոզուել որ դրա (կառավարութեան) մասին մեր լսած առասպելները անհիմն էին, և որ այդպիսի մի կառավարութիւն իրօք գոյութիւն ունէր աշխարհում։

Դեսպանն ընծայելու էր նաև մեր Շահի պատկերը, որը ներկայացնում էր նորին մեծութիւնը իր ադամանդներով վառուող զգեստում, թէք ընկած մարգարտադարձ բարձի վրայ, մօրուքը մինչև գօտին հասած՝ փռուած իր կուրծքի վրայ, աչքերն այնքան մեծ-մեծ որ համարեա էլ տեղ չէր մնում յօնքերի և այտերի համար, և մէջքը մէկ թղից ոչ աւելի մեծ շրջապատով։

Մեր կարծիքով այդ պատկերը աւելի մեծ յարգանքով պիտի ընդունուէր որպէս ընծայ քան բանաստեղծութիւնը, մանաւանդ որ դա շիրազցի Մոհամէդ Նադիր—երևելի նկարչի գործն էր։

Դեսպանը հազաւ իր այն գեղեցիկ բաճկոնը, որ զարդարուած էր զառնաուղով և ոսկեթել ծաղիկներով։ Նա իր այդ զգեստի վրայ աւելացրեց իր ադամանդեայ կոթով դաշոյնը և զմրուխտով զարդարուած գօտի ունեցող թուրը, ինչպէս և

1) Հնդկաստան, Սէյլոն և Զինաստան։

2) Company, ծ.թ։

իր սամոյրէ մուշտակը որ յաճախ շնորհազարդել էր իր ողորմած և շնորհալի վեհապետի անձը:

Մոհամէդ բէկը պատրաստուել էր որպէս արարողապետ: Նա մի շալ էր փաթաթել իր գլխարկի շուրջը, կարմիր գուլպաներ էր հագել և ձեռք էր առել պաշտօնական երկայն գաւազանը:

Ես էլ պէտի ընծայուելիք բանաստեղծութիւնը տանէի մինչև մեր այցելատեղին, և այնտեղ յանձնէի դեսպանին, որպէսզի նա ինքն իր ձեռքով մատուցանէր ում որ հարկն էր:

Վերջապէս կառքեր մտնելով՝ ճանապարհուեցինք, և ձյն երկար ճանապարհը, որ մենք անցանք քաղաքի միջով, մեր հաշուով, Թէհրանի շրջապատի չափ էր: Փողոցները լի էին ձյնքան ընակիչներով, որքան լինում են մեր ամենաշատ յաճախորդ ունեցող բազարները: Մենք անցնում էինք այնքան բաղձաթիւ կառքերի, վագոնների, սայլերի և այլ տեսակ անիւաւոր բաների միջով, որ հրաշք համարեցինք որ կարողացանք անվտանգ անցնել: Զարմանալի էր, մենք, յիրաւի, մինչև այդ ժամանակ դեռ չէինք կարողացել մի որոշ գաղափար կազմել այս սքանչելի քաղաքի տարածութեան մասին:

Հնդկական պալատը տանող ծառուղիները նոյնքան լի էին րազմութեամբ՝ որքան միւս փողոցները: Կառքերը յանկարծ կանգ առան, դեսպանն իջաւ մարմարեայ սիւներով զարդարուած մի մեծ դրան առաջ և մտաւ շինութեան մէջ: Երաժշտութիւնը յայտարարեց մեր մուտքը: Շինութեան բոլոր միջանցքներում կարգաւ կանգնած էին լաւ հագնուած և զինուած զինուորներ:

Դեսպանին ընդունեցին մի քանի անձնաւորութիւններ, որոնք մեծարեցին նրան յանուն հնդկական կառավարութեան, և յետոյ առաջնորդեցին՝ (իւր բոլոր շքախմբով հանդերձ) երկար ու խառն անցքերով դէպի մի մեծ սենեակ, ուր աթոռների վրայ նստած էին քսան և չորս ֆրանկներ: Այդ ֆրանկները, ինչպէս մեզ ասուեց, ձյն անձնաւորութիւններն էին, որոնցից կազմուած էր Նոմնպանի կոչուածը: Այդ մարդկանց գլխաւորը նստած էր միւսներից մի քիչ աւելի բարձր աթոռի վրայ, և նրա մօտ նստած էր վէքիլը կամ տեղապահը: Առաջինն՝ դեսպանը ողջունեց և մատուցեց արքայից արքայի յօրինած բանաստեղծութեան պատճէնը:

Հէնց մենք սկսեցինք այդ բանաստեղծութիւնը հանել իր հօթը ծրարների միջից, աթոռների վրայ նստած քսանչորս ֆրանկները սկսեցին մեծ հետաքրքրութեամբ նայել, և իւրաքանչիւր ծրարի բացուելու հետ՝ նրանց անհամբերութիւնը ա-

ւելի շատանում էր: Պարզ էր որ նրանք շատ անհաժեր էին տեսնելու արքայական ընծան: Վերջապէս երբ հասանք վերջին ծրարին, և երբ բանաստեղծութիւնն երևաց, դիտող Քրանկների շատերի դէմքերի վրայ երևացին հիասթափութեան նըշաններ. որովհետեւ նրանք անշուշտ սպասում էին մի աւելի թանկագին, աւելի արժէք ունեցող բան տեսնելու:

—Օ, այդ միայն մի գրքոյկ է, ասացին նրանք միարեբան և կրկին նստան իրանց աթոռների վրայ:

Ես նկատեցի որ դեսպանի տրամադրութիւնը փոխուեց, երբ տեսաւ որ մատուցուելիք ընծան չթողեց իր սպասած տպաւորութիւնը: Կուժպանու նախագահը, փոխանակ երկու ձեռքով ստանալու արքայական ընծան և յարգանքով ճակատին դնելու, ինչպէս մենք կ'անէինք՝ ստացաւ միայն իր աջ ձեռքով, երկու-երեք անգամ գլուխ խոնարհեցրեց, և մէհմանդարի միջոցով մի քանի խօսք ասաց: Ընծան ստանալուց յետոյ, նախագահը տուեց իր վաքիլին, սա էլ տեսնելով տուեց իր կողքի Քրանկին, և այսպէս մէկը միւսին տալով՝ անցաւ բոլոր քսան և չորս հոգու ձեռքից:

Ես նշմարեցի որ նրանցից շատերը հակառակ կողմից էին բռնում գրքոյկը, և Մոհամէդ բէկին ասացի որ եթէ մեր Շահը գիտենար թէ իր ուղեղի թանկագին արտադրութիւնը ինչպիսի մարդկանց ձեռք էր ընկնելու, նա երբէք այդքան նեղութիւն չէր կրի այդ բանաստեղծութիւնը այդքան հեռու տեղ ուղարկել՝ հիացմունք չարժեքու յոյսով:

Ապա ներս բերուեց Շահի պատկերը և ի ցոյց դրուեց: Պատկերը բաց անելուց յետոյ՝ դեսպանը պարտ ու պատշաճ համարեց ակնածութեամբ մոտենալ և խոնարհաբար գլուխ տալ դրան, որպէս թե նորին ձեռութիւնն ինքն էր կանգնած այնտեղ: Նրա օրինակին հետեցինք և՛ մենք, բայց կուժպանու անդամներից և՛ ոչ մէկը չշարժուեց իր տեղից: Մեր այս արարողութիւնը բոլորին էլ զարմացրեց. որովհետեւ ես վստահ եմ որ նրանցից և՛ ոչ մէկը չգիտէր և չէր էլ կարող հասկանալ թէ պարսիկները որքան մեծ յարգանքով և ակնածութեամբ են վերաբերում դէպի իրանց վեհապետը:

Դեսպանը հրաւիրուեց այցելել կուժպանու մեծ տան զանազան տեղերը, որպէսզի նա կարողանար ակնատես լինելով՝ աւելի ճշտութեամբ ըմբռնել թէ ինչպիսի գործեր են կատարւում այստեղ: Նրան յայտնեցին որ իր տեսած բոլոր զինուորները, որոնք դուրս էին հանուել իրան պատուելու համար՝ իրանց (կուժպանու) շտեմարաններում աշխատող գործաւորներն էին:

—Ա՛, ասաց Միրզա Ֆիրուզը, եթէ դուք կարողանում էք ձեր ողորմելի հինդուներին սիւլայններ¹⁾ դարձնել, անկասկած առանց դժուարութեան կարող կը լինէք ձեր դոնապաններին էլ կանոնաւոր զինուորներ դարձնելու²⁾։

Մենք յետոյ մտանք գանձարանը, որտեղից անցանք մի ընդարձակ դահլիճ։ Դահլիճի շուրջը շարուած էին նստարաններ, որոնց վրայ որոշ դէպքերում ամեն մարդ կարող է բարձրանալ և իր միտքը կամ կարծիքը յայտնել։ Յետոյ մտանք շատ դաժնթարխանէք, 3) ուր տեսանք թէ այդ վաճառական թագաւորները (այդպէս էր կոչուած նրանց Մոհամէդ բէկը) ինչքան մեծ գործ էին կատարում։ Վերջը մեզ տարան մի շատ շքեղազարդ սենեակ, որ կոչուած էր քէթարխանէ⁴⁾։ Այստեղ մենք շատ հրճուեցինք տեսնելով մի խումբ կանայք—գեղեցիկ զգեստներով կանայք, որոնք, երբ դեսպանը ներս մտաւ, առաջ եկան և ողջունեցին մեզ։ Նրանց գլխաւորներին ծանօթացրին դեսպանի հետ։ Բայց ես շատ զարմացայ և մինչև իսկ սկսեցի վախենալ, երբ տեսայ որ այդ կանանց մէջ էին և իմ բարեկամ Հոգերը։

Ես շատ անել դրութեան մէջ ընկայ, որովհետև մտածում էի թէ ինչ հնարքով Հոգերի մօտ պահպանեմ իմ կեղծեալ դիրքս ու անունս որպէս իշխան՝ և միեւնոյն ժամանակ դեսպանի հպատակն ու ստորադասն երևամ։ Այս շատ դժուար գործ էր։ Սկզբում ես վճռեցի անյապէս ձեռնալ որպէս թէ չեմ տեսնում նրանց, բայց շուտով գլխի ընկայ որ այդ հնարքն ապարդիւն պիտի անցնէր։ Պառաւ մայր Հոգը հեշտութեամբ բաց չէր թողնելու ինձ. որովհետև ինչ էլ որ միւս տիկիներն անէին, նա պիտի անպատճառ բոլորին յայտնէր որ ինքը ծանօթ է ինձ պէս մի իշխանի հետ։ Եւ ես չսխալուեցի, որովհետև նա մեծ հրճուանքով մօտս եկաւ, ձեռք թօթուեց հետս և զարմացրեց մերոնց։ Բարեբախտաբար դեսպանն այդ ըոպէին ինձանից հեռու, սենեակի միւս ծայրումը նայում էր հետաքրքրաշարժ իրերին, և ականատես չեղաւ այս բանին։

Մենք էլ շուտով խառնուեցինք բազմութեան մէջ, և քանի որ Հոգերը, ինչպէս և կոմպանու միւս անդամները քաղցրութեամբ և պաշտօնապէս էին վարւում մեզ հետ, իմ նոր

1) Sepoy, հնդիկ զինուոր. ծ. Թ.

2) Պարսկներն արհամարհանքով են նայում հինդուներին, և երբի այդ արհամարհանքը հետևանք է այն յաղթութիւնների, որ իրանց մեծահոշակ Նադիր շահը անջնջ հեշտութեամբ արեց։

3) Դրասնեակներ։ ծ. Թ.

4) Դրատուն, մատենադարան։ ծ. Թ.

բարեկամների հետ ունեցած մտերմութիւնը չյայտնուեց ուրիշներին:

Պառաւ տիկին Հոգը շատ էր ցանկանում որ ինքն էլ, իր աղջկներն էլ, Ֆրանկների սովորութեան համեմատ, կամ աւելի լաւ ասած՝ Ֆրանկի ձեռով ծանօթանային դեսպանի հետ, բայց ես արգելք դարձայ ասելով:

— Տիկին, մեր հին սովորութիւնները թոյլ չեն տալիս որ մի տղամարդ, կանանց ծանօթացնի ուրիշների հետ, կամ կանանց առաջնորդի, որպէս թէ նրանց տանում է բազարը վաճառելու, և քանի որ այդպէս է, տիկին, ես չեմ կարող ձեզ ծանօթացնել դեսպանի հետ, մանաւանդ այստեղ:

Ազատուելով այս հարցից—թէպէտ ես գիտէի որ ոչ մի պառաւ կին՝ ինչպէս տիկին Հոգը, այդպիսի մի թեթեւ պատճառով իր նպատակը գլխիցը չէր հանելու—ես յօժարութեամբ նուիրեցի «խոզերի հօրը»¹⁾, որը փորձեց բացատրութիւններ տալ ինձ՝ ի ցոյց տրուած բոլոր հետաքրքրաշարժ բաների մասին:

Այդ բաները համարեա բոլորն էլ արեւելեան էին. իսկ Անգլիայում նրանք հազուագիւտ բաներ էին համարւում, թէպէտ մեր աչքում նրանք շատ հասարակ իրեր էին, որ մենք մեր երկրում ամեն օր գործ ենք ածում:

Պարոն Հոգը ոչինչ բացատրութիւն չկարողացաւ տալ գրքերի մասին, որովհետեւ իր կարողութիւնից վեր էր: Դրանք լանձնուած էին մի պառաւ ֆրանկ միրզայի, որը, ինչպէս իմ առաջնորդը ասաց, շատ ուսեալ, շատ գիտուն մարդ էր: Նա այժմ կատարում էր իր պաշտօնը, դեսպանին ցոյց տալով բոլոր գրքերը, որոնց մի քանիսի տիտղոսներին նայելով՝ ես տեսայ որ շատ հազուագիւտ և թանկագին բաներ էին:

Բարեկամս շատ էր ցանկանում ինձ ցոյց տալ Տիպպու Սուլթանից առնուած բոլոր յաղթանակները: Այսինքն նրա գահը, զէնքերը և զգեստի մի քանի մասերը:

Նա ինձ ցոյց տուեց նաև ուրիշ հնդիկ պետերից առնուած բաներ—թրեր, նիզակներ, աղեղներ և վահաններ: Ի միջի այլոց, ես տեսայ մի թուր էլ, որ Հոգը պնդում էր թէ մի ժամանակ պատկանելիս է եղել մի յայտնի թիւրքի, այսինքն Կապիտան փաշային՝ ինչպէս ինքն էր կոչում նրան: Ես բաւական զարմացայ, որովհետեւ դեռ երբեք չէի լսած կամ կարդացած այդ պետի մասին. բայց երբ կարդացի պատեանի վրայ կպցրած թուղթը, ինչպէս և իսկ սրի փորագրուած բա-

¹⁾ պարոն Հոգին. ծ. թ.

ուերը, տեսայ որ իսկապէս դրան մի ժամանակ գործ ածելիս էր եղել մի շատ յայտնի թիւրք—մեծահոջակ Կապուտան փաշան:

—Բարիբալլահ, բարիբալլահ, ասացի ես. եթէ, հվ պարոն Հոգ, ձեզպէս մարդիկ են որ Հնդկաստանի թագաւորներն են դառնում, ուրեմն ի՞նչ զարմանալի կառավարութիւն պիտի լինի այդ կառավարութիւնը:

Մինչև այս ըոպէին, ես երբեմն աչքերիս ծայրերով հայեացքներ էի ձգել իմ գեղեցիկ Բէսիի վրայ, որը կանգնած էր բազմութեան մէջ. սակայն չէի յամարձակուել նրա հետ խօսել, վախենալով որ մի գուցէ հայրենակիցներս տեսնէին: Բէսիի մօտից չէր հեռանում մի դեռաւորս բեխերով երիտասարդ, որը նրան շատ փայփայում էր: Նրա այդ փայփայանքները չէին յարմարում իմ այն ծրագրին, որով ես մեծ յոյս ունէի շուտով հարստանալու ու երջանկանալու: Եւ սկսեցի մասածել թէ արդեօք իմ գեղեցիկ զիւլֆերը և իմ նեղ մէջքը չէին կարող աւելի դրաւիչ երևալ քան այդ երիտասարդի բեխերը, նրա աղաւնու կուրծքը, նրա գանգուր մազերը և, որ ամենից վեր էր՝ նրա կօշիկների ասպետական խթանները, որոնցով՝ ինչպէս մի քանի անգլիացի բիրիջներ ինձ ասել էին՝ աւելի դիւրին էր մի կնոջ սիրտ գրաւել քան որեւէ հմայքով՝ որ մենք պարսիկներս կարող ենք ունենալ:

Ես լսել էի որ մետաքսէ գուլպաները Պարսկաստանում գործ են ածւում որպէս թալիսմաններ՝ կնոջ սիրտ գրաւելու և նրան սիրահարեցնելու համար. բայց ասպետական խթանների մասին երբեք չէի լսել:

Իմ ամենալաւ անգլերէնով՝ մտքումս շարադրում էի մի քանի խօսք և պատրաստւում էի խօսել Բէսիի հետ՝ երբ սենեակում յանկարծ շփոթ ընկաւ և ինձ իսկոյն յայտնուեց որ դեսպանը պատրաստւում է հեռանալ:

Մենք՝ նրա հետևորդները իսկոյն հաւաքուեցինք և հէնց ուղում էինք սենեակից դուրս գալ՝ երբ տիկին Հոգը բազմութիւնը ճեղքելով եկաւ ինձ մօտ և բարձրաձայն ասաց.

—Յիշեցէք, իշխան, որ վաղը ընթրիլու էք մեր տանը:

Ես բախտաւոր էի որ մեզանից ոչ մէկը չիմացաւ թէ այդ խօսքերն հվ ասաց ինձ. բայց դեսպանը յետ նայեց և զարմանալով հարցրեց.

—Իշխան, հվ է այդ իշխանը:

—Ես ի՞նչ գիտեմ հվ, դեսպան, ասացի ես:

ԳԼ. ԼԷ.

Պարսկների դիտողութիւններն իրանց տեսած բաների մասին.—Միրզա Ֆիրուզը նամակներ է ստանում Պարսկաստանից,—Նա ուրախանում է.—
Հաջի Բաբան ողբում է:

Երբ տուն վերադարձանք, մենք, մեր սովորականի պէս, հաւաքուեցինք դեսպանի շուրջը և սպասեցինք մինչև նա արձակեց մեզ: Բայց նախ քան մեզ արձակելը, նա քանի անգամ թոյլ տուեց իրան՝ խօսել մեզ հեզ այդ օրուան մեր տեսած բաների, ինչպէս և՛ մեր ընտանիքների մասին:

Դառնալով ինձ՝ նա ասաց.

—Հաջի, այսօր ի՞նչպէս անցաւ քեզ համար. ի՞նչպէս տեսար այդ բոլոր բաները որ մեզ ցոյց տուին:

Մեր սովորական ձևով ես պատասխանեցի.

—Էյբ նաղաշտ, բադ նարուդ ¹⁾:

—Այժմ մենք գիտենք թէ ի՞նչ է նշանակում Կումպանին ասաց նա. բայց մենք պիտի շատ զգուշութեամբ և ճշտութեամբ յայտնենք արքայից արքային մեր այսօրուան տեսած ու լսած բոլոր բաները, որովհետեւ նորին մեծութիւնն այդպէս է հրամայել:

—Աչքիս վրայ, ասացի ես. ես կ'արձանագրեմ ամեն բան և կը բացատրեմ ամեն ինչ որ ես կարողացել եմ հասկանալ: Ես չեմ մոռանալ մինչև իսկ մեր տեսած մի գոյգ քաֆշ սաղըրին՝ որ պատկանելիս է եղել մեր Շահ Աբբասին: Ինչևէ, թոյլ տուէք ինձ ասել, որ իմ տգէտ տեղով ես կարծում եմ (գուցէ և սխալ է իմ կարծիքը), որ մի իմաստուն մարդու գլուխ արժէ այդ բոլոր քսան և չորս հոգի աթոռի վրայ նստողների հաւաքական գիտութեանը՝ եթէ նրանք բոլորն էլ նոյն չաղիկի, հաստիկի վաճառականների նման են, որի հետ ես խօսում էի այսօր:

—Թերեւս կարծիքդ ուղիղ է, ասաց դեսպանը. բայց ես էլ իմ կողմից պիտի ասեմ, որ այսօր ես խօսեցի նրանցից մէկերի հետ, որոնք իսկապէս զարմանալի հանճարի տէր մարդիկ էին: Նրանք կատարեալ էին: Աշխարհում ինչ որ կայ ու չկայ՝ նրանք գիտեն, և կարող են ինձանից ու քեզանից աւելի լաւ ասել թէ մեր Շահի մօրուքը քանի մագբերից է բաղկացած: Գլուխդ վկայ հաջի, գլուխդ վկայ, որ նրանք այնպիսի հարցեր տուին ինձ, որ ես շշմեցի և նրանց պատասխանելու

¹⁾ Վնաս չունէր, վատ չէր:

համար ինձ հարկաւոր եղաւ դիմել Ալլահի օգնութեանը և յոյսս նրա վրայ դնել։ Ես չեմ կարողանում պատմել իմ բոլոր տեսածները, և դարձանում են թէ այդ մարդիկ ճշտեղ են այդքան բան սովորել, կամ ճշտեղից են անդրան դիտութիւն ամբարել իրանց գլխի մէջ։

— Ի՞նչ էլ, պիտի խոստովանուեմ, մի երկու անգլիսի բաներ հարցրին, որոնց նմանը Ադի անապատում թափառող վայրենի էջը կ'աժաչէր հարցնել։ Օրինակի համար՝ նրանք ամենից առաջ նկատողութիւններ արին մեր երեսի թուխ գոյնի վրայ, յետոյ նրանցից մէկն հարցրեց թէ արդեօք մենք փարա սիւններ¹⁾։ Բանինք մեր երկրում, մի ուրիշն էլ՝ թէ արդեօք մենք կով չենք պաշտում։

— Մի ուրիշն էլ, ասաց Մոհամէդ բէգը, դրականապէս ասում էր որ իբր թէ մեր մեծահամբաւ Թամաս Դուլի խանն իրանդացի է եղել, որ՝ նրա իսկական անունը Թովմաս Կալիզան է եղել, և որ յետոյ մենք պարսիկներս նրան Նադիր Շահ ենք անուանել։

— Այդ, ի հարկէ, բացարձակ յանդգնութիւն կամ տգիտութիւն է նրանց կողմից, ասաց Միրզա Ֆիրուզը, բայց ես անքանը գիտեմ որ այդ մարդիկը, որոնց հետ ես այսօր բախտ ունեցայ խօսելու, խելօք, ուսեալ մարդիկ են, գիտնականներ են։ Այն պառաւ միրզան, որին յանձնուած էր ամբողջ մատենադարանը, ինձ մի քանի գրքեր ցոյց տալով՝ զարմացրեց, ապշեցրեց։ Ղրանք անգլիսի գրքեր էին, որոնց նմանը մեր Շահն անգամ չունի, և ինձ թւում է թէ նրանք Հնդկաստանը տիրողների սեփականութիւնն են եղել։ Մէհմանդարն ինձ հաւաստիացրեց որ այդ պառաւ Միրզան մեծ ուսումնական է, և, իսկապէս, նրա՝ ինձ հետ ունեցած պարսկերէն լեզուով խօսակցութիւնից՝ պարզ յայտնի էր որ նա մի մոլան է—մի մոլան՝ որի նմանը աշխարհումս շատ քիչերը կան։

— Ի՞նչ, դուք այս երկրի մոլաններին համեմատում էք մեր երկրի «օրէնքի մարդկանց», ասաց Աբրաա բէգն արհամարհանքով։ Ի՞նչ գիտեն այստեղի մոլանները, ի՞նչ են։

— Այո, ասաց Մոհամէդ բէգը, սրանք ոչինչ են. ուսման և գիտութեան համար մենք պիտի գնանք Իրան։ Անգլիայում մինչև այսօր գոնէ մէկ աստեղագէտի անուն չեմ լսել և կասկածում եմ թէ արդեօք այս երկրում կ'աճի, կը ճարձի մէկը որ կարողանայ մի օրացոյց կազմել։

— Ապուշներ, բացականչեց դեսպանը, դուք ի՞նչ գիտէք,

¹⁾ Սև եղբայրներ. սևեր, խափշիկներ։ Մ. Թ.

Խնչ էք հասկանում ուսումից և գիտութիւնից. դուք միայն ձեր գրքերն էք կարդացել, բայց տեսէք, այս մարդիկը կարդացել են և՛ իրանց և՛ մերը: Ձեր հոգին վկայ որ այն պառաւ միրզան, որին ես այսօր տեսայ, Իրանի բոլոր միրզաների և մոլլահների հայրն է:

Մեր օլէմաներից մը մէկն է մինչև այսօր տասը լեզու իմացել, այն էլ ինչպէս իմանալ—կատարեալ:

—Այդ շատ ճշմարիտ է, ասաց Մոհամէդ բէգը, բայց թոյլ տուէք ինձ աղաչել որ կրօնական խնդիրներն ինչպէս և՛ Ահադինները*) ճշտութեամբ բացատրելու՝ ոչ ոք չէ կարող համեմատուել կամ մրցել Ղուտի մեր գիտուն մոշտահիդ՝ Հաջի Մոհամէդի հետ:

—Մարդ, բացականչեց դեսպանը յաղթական տոնով, Ղուտի մուշտահիդը, կամ մեր կրօնը, կամ մեր Մարգարէի խօսքերն ինչ կապ ունեն անգլիացիների հետ: Անգլիացիներն անհաւատ են, մարդ. նրանք ասում են, որ իբր թէ մեր օրհնեալ՝ փէյղամարը¹⁾ փէյղամար չէ. որ իբր թէ մեր ղորանը գլխաւորապէս առնուած է սնանկացած ջհուղների գրուածքներից, ինչպէս և իրանց Աստուածաշունչ կոչուած գրքից: Այո, անգլիացիներն այդպէս են ասում, և միշտ իրանց եկեղեցիներում աղօթում են որ մենք քրիստոնեայ դառնանք:

Դեսպանի այս խօսքի վրայ Մոհամէդ բէգը շոյեց իր մօրուքը, փչեց իր ուսերի վրայ, և մըմնջաց իր հաւատի դաւանանքը:

—Պարսկաստանի բոլոր յայտնի և հմուտ մուշտահիդները մինչև այսօր չկարողացան այս ժողովրդի կարծիքները փոխել, շարունակեց դեսպանը. ընդ հակառակը անգլիացիները միշտ իրանց փաղրիներին ուղարկում են մեր երկիրը, և նրանց հետ ուղարկում են Աւետարաններ, որպէս զի նրանցով՝ նրանք մեզ քարոզեն և քրիստոնեայ դարձնեն: Նրանք իրանց լեզուով թարգմանել են մեր ղորանը, և այնպէս կատարեալ կերպով, որ մարդ զարմանում է: Վերջապէս. եթէ դու ցանկանում ես իմանալ թէ նրանք ինչ գիտութիւն ունեն, գնա այսօրուան մեր տեսած պառաւ միրզայից հարցրու, և տես նա ինչ պատասխան կը տայ քեզ: Ալլահ, Ալլահ, նա այնպիսի բաներ կ'ասի, որ հոգիդ դուրս կըթռչի բերանիցդ:

—Վերջ ի վերջոյ, բացականչեցի ես, մի բան որ ամենից

*) Մոհամէդի հինգ հազար երկու հարիւր և վաթսուն վեց ասացուածքը (պատգամները):

1) Պատգամատար, մարգարէ. ծ. Թ.

հաստատ է՝ այն է որ հարստութեան, ոյժի, գիտութեան և հանճարի տեսակէտից՝ անգլիացիները մի արտականգ ազգ են։

Այդ բոլորին սենեակը մտաւ անգլիացւոց թագաւորի կողմից մի պատգամաւոր, որը դեսպանին յանձնեց մեր Շահ-ընշահից ուղարկուած նամակներ. ինչպէս և արքայական ֆիրմաններ պարունակող մի մեծ ծրար։ Մինք ֆրանցիսք դեսպանի մօտ, մինչև նա մեծ երկիւղով և լուռ մտահոգութեամբ բաց արաւ ծրարը և նայեց նամակներին։ Ամենից առաջ նա բաց արաւ իր հաւատարիմ ծառայի գրած նամակը, որի բովանդակութիւնից հազիւ թէ մի երկու րարք կարդաց՝ և դէն շարտելով բացականչեց մեծ հրճուանքով։

— Ահա մի օլ Ալլահ. վերջապէս Ալլահը իր ողորմութեամբ շնորհել է ինձ իր օրհնութիւնը... այդ շուն Միրզա Շէֆին սաստկե՛լ է։

Առանց սպասելու և առանց ուրիշ խօսք ասելու, նա իսկոյն շտապեց դէպի մի անկիւն, ուր նա չոպեց և արեց այն, ինչ երկար ժամանակից ի վեր զանցառութեան էր տուել— նա աղօթեց։

Մենք ամենքս էլ անչափ զարմացանք, և սկսեցինք միմեանց երեսինայել։

Ես էլ պարտաւորուեցի միւսների հետ գոռալ «Ահա մի օլ Ալլահ», թէպէտ, ճիշտն ասած, ես պիտի լաց լինէի, որովհետև մեծ վէզրի մահով՝ ես կորցրել էի իմ գլխաւոր պաշտպանը, գլխաւոր երաշխաւորը, որի շնորհիւ դեսպանը ցարդ քաղցր ու բարի էր եղել դէպի ինձ։

Իր աղօթքը վերջացնելուց յետոյ, նա շատ ոգևորուեց. հրճուանքից չէր կարողանում ոտի վրայ կանգնել. նա չէր համբերում որ մինչև վերջ կարողանայ կարգալ բոլոր նամակները։ Եւ նա իրաւունք ունէր այդպէս ուրախանալու. որովհետև նա ազատուելու էր իր ամենահզօր և ամենաոխերիմ թշնամուց. մէկ էլ որ նրա բարեկամներն ու ազգականներն այժմ միջոց ունէին հզօրանալու։

Իր հազներգութեան մէջ նա յաճախ բացականչում էր՝ «Միրզա Շէֆին դնաց», և ամբողջ օրը նոյն բառերը շարունակ խաղում էին նրա շրթունքների վրայ և շուրջը՝ ինչպէս մեղուները, որ շարունակ թռչում, պտոյտ են գալիս իրանց սիրած ծաղկի շուրջը։

Ես դեռ ժամանակ չունէի լաւ մտածելու թէ մեծ վէզրի մահը հաւանականաբար մինչև ինչ աստիճան պիտի ազդէր ապագայում իրապօրծուելիք նպատակներին վրայ. բայց յետոյ, շուտով նկատեցի որ դեսպանի վարքը դէպի ինձ փոխուեց։

Մինչև այդ ժամանակ նա միշտ աշխատել էր մի որոշ աստի-
ճան յարգանքով վերաբերուել դէպի ինձ. որովհետև նա նայում
էր ինձ վրայ որպէս մէկի՝ որ վայելում էր ամենաբարձր հե-
ղինակութիւն ունեցող մարդու պաշտպանութիւնը, և միևնոյն
ժամանակ գաղտնի լրտես էր նշանակուած իր շարժումների
վրայ: Բայց այժմ ես տեսայ որ նրա՝ ինձ ուղղած խօսքերի
մէջ ծաղրի և խնդութեան տոն կայ, և ես, վերջապէս ստիպուած
էի տանել այդ վիրաւորանքը և համբերել որքան կարելի էր:

— Վերջապէս, հայրդ գնաց, ասաց նա. սնտկեց այն
պառաւ շունը, և դու բախտաւոր ես որ նա գնաց այս աշխա-
րհից, որովհետև այդ պառաւ շան բախտի հետ կապուած մա-
րդու աջողութիւնը երբէք տևողական չէր լինի: Գիտես, Շահը
իւրացրել է նրա բոլոր ստացուածքը: Նրա գողացած բոլոր
բաները, ուրիշներից ուժով առած բաները, իր ամբարներում
դիզուած բոլոր բաները—բոլորը, բոլորը գնացել է Շահի պա-
լատը և նրա սեպականութիւնն է դարձել: Նրա ստրուկներին
բաժանել են Շահի որդիների և օմրանների մէջ. իսկ նրա վրա-
ցունիները տարուել են արքայական հարեմը:

— Յոյս ունեմ որ ձեր շնորհը չի պակասիլ իմ վրայից,
ասացի ես: Ես կորցրել եմ մի բարեկամ, բայց յոյս ունեմ որ
յանձին ձեր՝ դեռ մեկ բարեկամ էլ ունեմ:

— Գնա, գնա, ասաց Միրզա Ֆիրուզը, գնա, միտքդ հան-
գատացրու: Անցեալի վրայ՝ մենք քչք հն փակել, մենք այն
մարդը չենք, որը երկու գոյնով մօրուք է պահում, և երբեմն
այս գոյնն է ցոյց տալիս, և երբեմն էլ այն, մի օր տաք է
փչում և մի օր սառն...

Գլ. ԼԸ.

Հաջի Բաբան ընթրում է մի անգլիացի քսղաքացու հետ: Այն մարդկանց
մասին որոնց նա հանդիպում է:

Հետեւեալ օրը ես այնքան զբաղուած էի գրելով, որ
սկսեցի երկիւղ կրել՝ մտածելով թէ մի գուցէ ինձ չյաջողուի
դեսպանից ծածուկ դուրս ծլկուել և գնալ Հոգերի մօտ՝ վայե-
լելու շատ բաղձալի ընթրիքը, որի ժամը մօտ էր:

Բարեբախտաբար պատահեց մի բան, որն այնքան մտա-
ծութիւն պատճառեց զեսպանին, որ նա բոլորովին մոռացաւ
ինձ էլ, և ես միջոց ունեցայ գնալու Հոգերի մօտ:

Տանից դուրս գնալիս, ես փառք տուի Ալլահին, և մի թարմ ոլոր տուի բեխերիս:

Գնալուց առաջ ես աշխատեցի, որքան կարելի էր անձս լաւ դարդարել հաճելի՝ երեւալու համար: Իմ հին պարսկական շապիկները տեղ՝ ես այժմ ունէի մի քանի փայլուն սպիտակ շապիկներ՝ որ մի անգլիացի կարարար պատրաստել էր ինձ համար: Հազար ու մէկ հնարքներով ես կարողացել էի իմ իշխանաւորից հազիւ այնքան փող առնել՝ որով ինձ համար գնել էի նոր սպիտակեղէն, մի նոր շաբա, և մի զոյգ մետաքսէ գուլպայ, որի նման դեռ կեանքումս չէի հագել:

Վերջապէս, ես լաւ հագնուեցի և տանից դուրս ելայ: Ճանապարհին, ճ, էլ ի՞նչ ասես որ չէի մտածում. ինչպիսի փառաւոր օդային պալատներ էի կառուցանում: Եթէ ինձ միայն աջողուէր լուսներէս Բէսիի սիրտը գրաւել, և նրա հետ ամուսնանալ, ճ, այն ժամանակ ես համարձակ անց կը կացնէի կեանքիս մնացորդ օրերը՝ ապրելով անկախ՝ դեսպանից, Շահ-բից և կառավարութիւններից:

Հասայ Հոգբերի տան դուռը, որտեղ ոտքս սայթաքեց. «Չարագուշակ նշան է սա», ասացի ես ինձ ու ինձ, և դուռը բաղխեցի: Շատ սպասելուց՝ յետոյ, վերջապէս դուռը բացեց գլուխը սպիտակ փոշով ծածկուած մի մարդ՝ որը, ինչպէս երեւաց շատ վաղ էր և ժամանակ չէր ունեցել իր բաճկոնը հագնելու:

Մի ուրիշ մարդ էլ որ նոյնքան վրադ էր, գննելով ինձ ոտից մինչև գլուխ, առաջնորդեց ինձ ռանդուխքներն ի վեր, և երբ հասանք մեծ սենեակը, ընտանիքի ոչ մի անդամը ներկայ չէր ինձ ընդունելու: Սենեակում շշմած, շշկուած գործում էր մի աղախին, նա տեղափոխում էր աթոռները, մաքրում էր սեղանները և փափկացնում էր բարձերը:

«Այս ի՞նչ խաբար է», մտածեցի ես. «գուցէ այսօր ընթրիքի օրը չ'է. կամ գուցէ ես շուտ եմ եկել, լաւ, կը տեսնենք»:

Եթէ ես Պարսկաստանում լինէի և այսպիսի մի ժամանակ սպասում լինէի տան տիրոջը, ես կը նստէի ամենացած տեղում և իմ միայնութիւնից սգուելով՝ կը կրկնէի «Ալլահ ներքի ինձ» և թէսքիս կը գցէի. բայց այստեղ, ուր ոչ բարձր տեղն էր յայտնի. և ոչ ցածը՝ ես չէի հասկանում ի՞նչ տեղ և ի՞նչպէս նստել:

Ինչևէ, աչքս ընկաւ մի խալիչայի (փոքրիկ գորգ) վրայ, (ճիշտ այնպիսին՝ որի վրայ մենք Պարսկաստանում աղօթելիս նստում ենք) որ փռուած էր վառարանի առաջ, ես խսկոյն գնացի վրան չոգեցի, թէսքիս հանեցի և կրկնեցի Փաթէն և

յետոյ սկսեցի ասել «հարիւր ու մէկ ասթաֆօրէլահները»։ Աղօթքս մի քանի անգամ ընդհատուեց, որովհետեւ յանկարծ մէկը իր գլուխը ներս էր բերում դռնից և նայում էր սենեակի մէջ, և մինչև ես գլուխս բարձրացնում էի տեսնելու թէ այդ ով է, նա յետ էր քաշում իր գլուխը։ Մի քանի անգամ այդպէս կրկնեց, ի վերջոյ մէկը զարկեց տան դուրը, և ես սպասելուց ձանձրացած լինելով՝ գլուխս պատուհանից դուրս տարայ և տեսայ «խոզերի հօրը», որ շատ ծանր ծանր իջնում էր ձիուց։

«Անտարակոյս, մտածեցի ես, մեր ժամացոյցները տարբեր պիտի լինեն—կամ իմս է սխալ կամ սրանցը, կամ թէ չէ, բախտիս անիւն յետ է դարձել և ինձ չի յաջողուել ժամանակին գալ, կամ թէ չէ՝ այս տան ընակիչները բոլորովին անհոգ են ժամանակի և տեղի մասին»։

Շուտով կրկին լսուեց տան դրան մի զարկ. այս անգամ աւելի ուժգին, և մի ծառայ շատ մեծ ձևականութեամբ յայտարարեց մի բան՝ որ ես ամենևին չկարողացայ հասկանալ. բայց մի րոպէ չանցած՝ սենեակը մտան փետրազարդ գլխարկներով մի մեծ խանութ, մի ջահիլ խանութ, մի հասակաւոր պարոն և մէկ էլ զուարթերես, առոյգ երիտասարդ։ Նրանք բոլորն էլ ինձ նայեցին զանազան ձևերով. մեծ խանութը ժպտալով նայեց ինձ, ջահիլը զարմանքով նայեց մի փոքրիկ ապակեայ գործիքի ետևից, որ նա դնում էր աչքերին և կրկին վերցնում, հրիտասարդ պարոնը նայեց այնպէս՝ ինչպէս թէ ուզում էր հետս խօսել. սակայն նրանք բոլորն էլ փոխանակ ինձ ողջունելու, քաշուեցին մի պատուհանի մօտ և սկսեցին փոփոխ իրար հետ։

Այդ րոպէին շտապով ներս մտան մայր և երկու աղջիկ Հոգերը, որոնք մեզ տեսնելուն պէս՝ սկսեցին միաձայն խօսել և ներողութիւն խնդրել որ պատրաստ չէին եղել մեզ ընդունելու։ Յետոյ եկան ինձ մօտ, և «իշխան» բառն սկսեց իրար ետևից թռչել նրանց շրթունքներից, նրանք սկսեցին շատ մանր-մունր բաներ հարցնել ինձ. նրանք ներողութիւն խնդրեցին ինձ սպասեցնելու համար, և, վերջապէս, ինձ ծանօթացրին միւս հիւրերի հետ։

Ես նկատեցի որ զուարթերես երիտասարդն անծանօթ էր Հոգերին, որովհետեւ հասակաւոր պարոնը նրան ծանօթացրեց տան տիկնոջ հետ։ Յետոյ նրան ծանօթացրին ինձ հետ և ասացին որ իբր շատ ուսեալ մարդ էր, շատ լեզուններ գիտէր և, ի միջի այլոց, լաւ էլ պարսկերէն գիտէր. բայց աւել-

լացրին որ իբր թէ նա ամենից կատարեալ գիտէր չինարէն լեզուն:

Ինձ թուաց թէ ես առաջուց էլ տեսել էի հասակաւոր պարոնին, և իսկոյն յանձին նրա՝ ես ճանաչեցի հնդկական պալատի քսանեչորս սթոռներէ վրայ նստողներէց մէկը: Պարոն Հոգն էլ ականջիս ասաց թէ նա մի նաւովաւ է, որովհետեւ երկար ժամանակ նա Հնդկաստանում էր եղել և այնտեղից վերադարձել էր մեծ հարստութեամբ, և որ նա իր հետ բերել էր այդ ուսեալ լեզուագէտ երիտասարդին, որպէս զի նա ինձ հետ խօսակցէր. և իմ ասելիքը թարգմանէր միւս հիւրերի համար:

Այդ մոլլահը (որովհետեւ ես մոլլահ պիտի կոչեմ նրան) փորձեց պարսկերէն լեզուով մի քանի մեծարանաց խօսքեր ասել ինձ. բայց ես համարեա ոչինչ չկարողացայ հասկանալ: Այն երեկոն, ես շատ անգամ խօսեցի նրա հետ, բայց «բալի սահիբ» բառերից զատ՝ ուրնչ ոչ մի խօսք չլսեցի նրանից:

Հետզհետէ ուրիշ հիւրեր էլ եկան՝ իրարից բաւական ուշ-ուշ, և բոլորի հետ էլ ինձ ծանօթացրին: Ի միջի այլոց, ես ծանօթացայ մի բօրիչի, մի օրէնսագետի և մի քօլօնիի հետ:

Ընթրիքի ժամանակ էր. բոլորն էլ պատրաստ էին ընթրելու, բայց սպասում էին մի ինչ որ լորդի: Պարոն և տիկին Հոգերն էլ իրար հետ համաձայն էին որ առանց այդ լորդի ընթրելը՝ բախտից զրկուել կլինէր:

Մինչ ամենքս անձկութեամբ սպասում էինք նրան, տան դուռը զարկուեց և հիւրերը միաձայն բացականչեցին՝ «փանօք Մարգարէին, ահա նա», և սենեակի շեմի վրայ յայտնուեց այն դեռաբոյս բեխերով երիտասարդը, որը զբոլել էր իմ նախանձը Բէսիի նկատմամբ և որին կամ մոռացել էին հրաւիրել՝ կամ չէին սպասում: Նրա դէմքը շատ մեծ ինքնաբաւականութիւն էր արտայայտում: Նա մտաւ վեհանձնօրէն և բոլորին ողջունեց գլուխ տալով: Նա շուտով արեց այն՝ ինչ ես տեսչում էի անել, այսինքն նա իսկոյն մօտեցաւ Բէսիին և կատարեց ձեռք թօթուելու ձևը, ապա սկսեց խօսել նրա և նրա քոյրերի հետ այնպէս՝ որպէս թէ այդ գիշերն ընթրելու չէինք ինքն էլ, մենք էլ:

Կէս ժամից յետ վերջապէս բացակայ լորդը ներկայացաւ: Բոլորը նրան այնքան յարգեցին, մեծարեցին՝ որ կասես թէ աշխարհում միայն հենց նա էր լորդ, էլ ուրիշ լորդ չկար: Պարոն և տիկին Հոգերը նրան ծանօթացրին իրանց աղջիկների հետ: Իմ մասին էլ նրան յայտնեցին որ ես իշխան եմ. նա ըստ

երևոյթին շատ ուրախացաւ, բայց միւս հիւրերին իր շնորհաց շուքին լայեղ չարեց:

Ո՞վ գիտէ թէ այդ լորդը ի՞նչ մեծ իրաւունքների տէր էր, կամ որչափ բարձր դիրք և անուն ունէր Անգլիայի ազնուականների շրջանում, բայց նրա վրայ երբէք հպարտութիւն չէր երևում. ընդհակառակը նա աւելի հեղ և խոնարհ էր, աւելի դերվիշանման էր՝ քան ներկայ եղողներից որեւէ մէկը: Նրա ներկայութիւնը բոլորին վրայ ազդեց. բոլորն էլ սկսեցին իրանց հաւաքել:

Նա ինքն իրան շատ հանգիստ և ազատ էր պահում: Երբէք ճնշուած չէր երևում. բայց միւս հիւրերը անշուշտ իրանց այնքան ազատ չէին զգում, որքան զգում էին նրա բացակայութեան ժամանակ: Մինչև անգամ տիկին Հոգը, որ բնութեամբ շատ հետաքրքիր, փառասէր և միջամտող էր՝ չէր համարձակւում բարձր խօսել:

Վերջապէս սեղանատան դուռը բացուեց և ընթրիքի գնալու ծէսն սկսուեց: Որոշուեց որ տան տիկնոջը ես թեւանցուկ առաջնորդէի դէպի սեղանը, տան տէրը՝ նոյն ձևով նազվարի տիկնոջը, լորդը՝ տան տիկնոջ աղջիկներից մէկին, իսկ միւսները հետեւէին մեզ ինչպէս որ ամենայնրմարը լինէր:

Ընթրիքի սեղանը ներկայացնում էր մի ճոխութիւն, որ կարժէր մի թագաւորի ամբողջ հարստութեանը. նրա վրայ դրուած էին այնքան բազմաթիւ բաժակներ, գաւաթներ, շիշեր, չինական անոթներ և շատ այլ հետաքրքրաշարժ, տարօրինակ բաներ, որ նրանցով Շահը կարող կը լինէր փառաւոր կերպով զարդարել իր ամենամեծ դահլիճի դարակները: Մոմերն ու լամպաներն այնքան շատ էին, որ Շահի գոլէսթանում անգամ այդքան չկան:

Ես նստայ պատույ պթոռի վրայ՝ տան տիկնոջ աջ կողմին. (Պարսկաստանում թիվ կը հաւատար այդ) իսկ նրա ձախ կողմին նստաւ լորդը: Ինձ մօտ նստաւ արեւելեան և այլ լեզուների պրօփեսօր մուլան, որը պիտի թարգմանէր ինձ համար՝ ինչ որ ես չկարողանայի հասկանալ կամ հասկացնել: Ինձանից ոչ շատ հեռու նստած էին բժիշկը և օրէնսդէտը. սակայն իմ սիրոյ առարկան՝ այն վարդի կոկոնը, որի շուրջը միշտ թռչկոտում էր իմ սրտի սոխակը՝ շատ հեռու էր ինձանից: Երբեմն գլուխս դէպի աջ կողմս թեքելով. ես տեսնում էի նրա քիթը, թէև միւսնոյն ժամանակ՝ նոյն գծի վրայ՝ աչքիս էին ընկնում իմ հակառակորդի քիթն ու բերանն էլ: Լորդը շատ քիչ էր խօսում, բայց նա շատ մեծ քաղաքավարութեամբ էր վերաբերւում դէպի իմ աթոռակիցը՝ տիկին Հոգը, որը իրան բացառապէս նուիր-